

8117

ԽՐԻՄԵԱՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆ



Գրեց

ՍԵՊՈՒՀ ՍՏԵՓԱՆԵԱՆ

634

U-28

Չկայ աւելի արդար, ազատ եւ
անխաղախ վաստակ աշխարհի
վրայ քան հողագործութիւնը:

Արեւ հայրենասօր հողն ու
դառը, երբեք չբաժնուիլ անկից,
գրեմալով քե՛ իր կեանքն հողն է
եւ հողագործութիւնը արդար վաս-
տակ:

ԽՐԻՄԵԱՆ



Նարնջագեղ տղարութիւնը եւ
կապտագեղ խաղաղութիւնը, որ
կը համբուրուին մեր կողին վրայ՝
սերս եւ շինդ գիրկընդխառնումով
մը, հարազատօրէն կը պակեա-
ցընեն բուրմունք մեր արեւուն
եւ քամունք մեր հողիներուն:

ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐ

2011

634
U-88



ԽՐԻՄԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԻ ՄԶԱԿՈՒԹԻՒՆ




2002



Գրեց
ՍԵՊՈՒՆ ՄՏԵՓԱՆԵԱՆ

9477



1. — ԳԵՏՆԱՊԻՍԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆ
 2. — ԶԻՆԱԿԱՆ ԼՈՒԲԻԱՅԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆ (Մամուլի ճակ)
 3. — ԱՆՈՒՇ ՓԱԹԱԹԷՍԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆ (Հրատարակելի)
 4. — ԳԵՏՆԱՍԱՆՁԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆ , ,
 5. — ՇՐԱՇԱԳՈՐԾ ԲԱԿՏԵՐԻԱՆ , ,
 6. — ԱՆԿՈՐԱԿԱՆ ԹԻՖԹԻԿԻ ԱՅԾԸ , ,
- (Շար.)

74883 ախ



(4992 / 39)

ԹԻԻ 1	ԱՂԵՔԱՆԴՐԻԱ	ՄԱՅԻՍ 1931
-------	------------	------------

1235-85

Տպագր. Ա. ԳԱՍԱՊԵԱՆ

ԽՐԻՄԵԱՆ

ԳԻՒԼԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Վարէ որդեակդ իմ Սամուէլ,
Ուղիղ վարէ զմանն եւ ակօս :
ԽՐԻՄԵԱՆ

Ամենայն հայոց «Պապիկ»ին՝ մենք աշխարհափիւռ երախտագէս «Թոռնիկ»ները, արծուեքոյնն Արմենիոյ արծուեքոյնիչ Հայրիկին անունով հիմնած ենք «Խրիմեան Գիւլասնեստական Մատենաշար» մը՝ Խրիմեանական հարազատ ոգիով եւ խորիմաստ նպատակով :

Արեւելեան Հայաստանի Հայ գեղջուկ դասակարգը, ցարական կառավարութեան մասնաւոր կարգադրութեամբ, սգիտութեան մեջ պահուած էր : Մինչդեռ բոլորս ալ գիտենք քե՛հ Հայաստան ընդարձակ գիւղաշխարհ մըն է եւ Հայ Հանրապետութիւնն ալ՝ գիւղացիներու հանրապետութիւն : Հակառակ այս նշմարութեան, արդիական գիւղասնեստութեան բարիքներէն զրեքէ զրկուած կը մնայ հայ գիւղացին, քե՛հ վերջին տեսներ զովելի փայլեր առնուած են այդ ուղղութեամբ :

Արեւմտեան Հայաստանի մեջ ոչ եւս են հայ գիւղն ու հայ գիւղացին : Հայ աշխարհի փանդումը իր լիութեան հասաւ այդ օրը, երբ իր գիւղերը բնաջնջուեցան : Արեւմտեան Հայաստանի գիւղացիներն ալ, բուրբ կառավարութեան շիլ փաղափակներէն շնորհիւ, մնացած են սգէս : Այսօր անոնց բեկորները՝ ցրուած գաղաթախարհի մեջ, կը նզգին բոյներ կազմել Սիւրիոյ, Լիբանանի, Միջագետքի, Յունաստանի եւ Ֆրանսայի մեջ : Իրենք ալ՝ նման Արեւելեան Հայաստանի իրենց հարազատ եղբայրներուն՝ ծարաւ ունին գիտութեան :

Հակառակ անոր որ ընթերցասիրութիւնը, վերջին փառադ դարու երջանին, բաւական ծաւալած է հայ զանգուածներու մեջ, հայ գիւղացիին կը պակսին արդիական գիւղասնեստութիւնը բացատրող քերքեր ու գիրքեր : Հայ երկրագործական գրականութիւնը շատ աղքատ է :

Հայ Գիւլասնեստականի մասնագէտ սաներու աշխատակցութեամբ՝ հիմնելով «Խրիմեան Գիւլասնեստական Մատենաշար»ը՝ ծանր խաչ մը շաղկած՝ կը նետուինք ասպարեզ, նպատակ ունենալով հրատարակել, ամերիկեան դուրսէմբլ՝ դիւրահասկնալի, գործնական եւ նոյն կերպով պատկերազարդ՝ երկրագործական զբոյլներ եւ զանոնք ձեռնարկող ցրուել մէկ կողմէ Հայաստանի մեջ եւ, միւս կողմէ, գաղաթախարհի երկրագործական հայ գաղութներու եւ գիւղերու մեջ : Այս զբոյլները պիտի ըլլան բուսագրուած եւ իրենց ամբողջութիւնը պիտի կազմէ Հայ երկրագործական Ժողովրդական Համայնագիտարանը՝ իր տեսակին մեջ նորութիւն մը մեր Ազգին համար :

Երբ նկատի ունենանք, որ այսօր Բաղրամյանի անվան շուկայի վրա կ'աշխատի շենքերը և արդիացնելու երկրագործությունը, մեկ խօսքով ազգայնացնելու արդիւնաբերությունը, մենք վստահ ենք, որ այդ ուղղությամբ մեր ներքին համայնքը, հայ գիտական հաստատություններն անվերապահ գնահատման և աջակցության պիտի արժանանայ:

Կ'ընդունենք, որ դասարկ Բաղրամյանի մասին բազմաթիվ գործի մեծ նշանակությունը յանդգնությունը մեր է: Ինչպես ըստինք, ծանր խաչ մը՝ Գողգոթայի դաժան հեռանկարով: Բայց ազգային գործերուն անհատական գործերուն մասին հետաքրքրված և արհեստագործական շուկայի արդիւնաբերություն՝ փորձառութեամբ ծանօթացած ըլլալով, մեր այս ձեռնարկն ալ, հակառակ հաւանական չկամութիւններուն և անհեղինակ քննադատութիւններուն, մօտ ժամանակի մէջ շեղօրէն պիտի փայլի, նման մեր Ուսանողական ձեռնարկին, որ այսօր, օղակալ մը երկնաւայտ ընկալելով, կը սուրայ անսպասելի հայ իրականութեան մէջ, յոյս և յոյս սփռելով հայ ուսումնական երիտասարդութեան կուռ շարժումներուն մէջ:

Ամերիկայի կ'ըսենք, որ «Աստուած շինեց գիւղը, իսկ մարդիկ Բաղրամը»: Իսկ մենք կ'ըսենք. «Գիւղացիին հրամցումը Աստուծոյ հրամցումը կը նկատուի»: Ահա այս պատճառով «Երկրի մասին Գիւղացիական Մասնաշաղկի» զբոյցները յոյս պիտի տեսնենք մաքուր արարչութեամբ, մաքուր բուրբի վրայ, շեղօրէն պատկերազարդ և «Երկրի և Բաղրամ» պիտի հրամցուին ինչ և նոր աստուածներուն գործունեութիւնն առարկայ հայ շարժառարկութեան, որոնք պահպան հրեշտակներն են արի «Հիւսիսականաց» հնադարեան Յեղիմ անգլագական Բնակալին:

Փա՛ռք, բի՛ւր փառք Հայրենիքի այս իրական հերոսներուն:

«Ի և ներքին և արտինք փառք քեզ»:

Թո՛ղ ուրեմն, Վարդապետի հայրենասէրը բառերով.

Հիւսիսային կողմն աշխարհի

Առաջնորդին քոյ ըլլայ,

Յակի ծովուն մէջ ցորենին

Յաւէ՛ լողայ քոյ գերանդին

Ու լայն ամբարն առնենք հեր քոյն:

Երկրորդին քոյ ըլլայ:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՒԼԱՏՆՅԵՍԱԿԱՆԻ

Աղեքանդրիա

28 Մայիս 1931



ԳԵՏՆԱՊԻՍԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1931

ՆԱԽԱԲԱՆ

Գետնապիտակը, երկրագործական երկիրներուն մէջ, իր բազմազան գործածութիւններով, մեծաշահ բոյսերուն կարգին մէջ մտած է: Մանաւանդ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն բամբակաբեր շրջանին մէջ 12 նահանգներ ընդարձակ դաշտեր յատկացուցած են այդ բոյսին մշակութեան և դաշին, բամբակին հետ միասին, մայրցամաքն են փոխանի ցանկին մէջ, պայքարելով նաեւ այս միջոցով բամբակի խոզակի պատիճաթեւ ուտիւնն դէմ:

Հայաստան, որ Միացեալ Նահանգներուն բամբակաբեր գոտիին հետ ունի կլիմայական նմանութիւններ, պարտի ուղղութիւնն զարմնել նաեւ այս բոյսին, որ իր վրայ կը միացնէ մշակական և առեւտրական չքնաղ յատկութիւններ:

Այնպիսի պահու մը, երբ մեր երկրին մէջ երկրագործութիւնը արդիացնելու համար, մեր ամերիկացի բարեկամներուն օժանդակութեամբ, հզօր ճիգեր կը թափուին, յարմար նկատեցինք գետնապիտակի մշակութեան վրայ ընել ամփոփ ուսումնասիրութիւն մը: Վստահ ենք թէ՛ մեր Հայաստանի երկրագործները, մասնագէտներուն առաջնորդութեամբ, այս ուղղութեամբ ալ պիտի լարեն իրենց ճիգերը և երկիրը պիտի օժտեն նոր բոյսով մը, որուն մշակութեան տարուէ տարի ընդարձակումը, ոչ միայն պիտի սատարէ անասնաբուծութեան զարգացման, այլ նաեւ երկրին պիտի պարգեւէ նոր ճարտարարուեստ մը, այն է գետնապիտակի իւղի արտադրութիւնը, որ ունի նմանապէս զանազան գործածութիւններ:

Գետնապիտակի խնդրանքը՝ վաճառականութեան մէջ, իբրեւ իւղի աղբիւր, շատ մեծ է:

Գետնապիտակի զտուած իւղը, ձէթէն ետքը, երկրորդ կուգայ և կընայ անոր տեղը բոնել: Ձէթը՝ գետնապիտակի իւղով կը խորհրդանշէ: Գետնապիտակի հում իւղը գեղնադոյն է և գետնապիտակի համն ու հոտը ունի: Այս հում իւղը օճառի պատրաստութեան մէջ կը գործածուի: Զտուած իւղը անդոյն է և գետնապիտակի համէն ու հոտէն զուրկ: Փրանսայի մէջ տարեկան 16 միլիոն կալօն (մէկ կալօնը չորսուկէս լիտր է) գետնապիտակի ուտելի իւղ և 23,000,000 կալօն ալ վար տեսակէն իւղ կը սպառի օճառի պատրաստութեան համար:

Գետնապիտակի իւղը, ուրիշ կարգ մը իւղերուն նման բարձր

տաքութեան անդհեցութեամբ շուտով չի տարբաղագրուիր. այս պատճառով երիւմի և խորովումի համար միւս իւզերէն լաւագոյն է :

Սարտին ձուկերը՝ ձէթով կը գրուին տուփերու մէջ, բայց անոնք նախապէս զեռնապիտտակի իւզին մէջ կ'եփուին : Գեռնապիտտակի իւզը կը գիմանայ բարձր տաքութեան, ինչ որ անհրաժեշտ է սարտինները պահելու համար :

Մարկարինի պատրաստութեան մէջ մեծաքանակ զեռնապիտտակի իւզ կը գործածուի :


Գեռնապիտտակի կարագը՝ միսի շերտէն մէկուկէս անգամ աւելի պրօքիմ (պօթալին նիւթ) և երեք անգամ աւելի ջերմոյժ կը պարունակէ :

Մէկ լիդր զեռնապիտտակը, ուժի տեսակէտով, հաւատար է 4,5 լիդր եղան միսին, 2 լիդր պանիրին, 33 հաւկիթին և 2 կալօն կաթին :

ՊԱՏՄԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Գեռնապիտտակի տունկը թիթեռնիկաձև ծաղիկներով ընդադգի մըն է (Légumineuses-papilionacées) : Իր լատինական անունն է *Arachis Hypogaea* : Այլ և այլ տեղեր, զանազան ռամիկ անուններով կը յորջորջուի : Գեռնապիտտակ, զեռնակաղին, զեռնաբակլայ, ոլոսկաղին, կապիկի կաղին, cahahuata, Սուտանական բակլայ (Փուլ Սուտանի, Եգիպտոսի մէջ), Ապուտին կամ Ապուլէպան (Բօրոֆան, Սուտանի մէջ), Մանտիկա կամ Թիկա (Վերին Նիկէր, Սենեկալ), Կէտա (Հիւսիսային Նիկէր), Զինի պատամ, Մանիլա Բօթէ, Մընի-Փալի (Հնդկաստան), առաւիս (Ֆրանսա), Peanut (Անգլիա և Ամերիկա), Սեր Ֆրսըրը, Ամերիկան Ֆրսըրը (Թուրքիա) և զեռնապիտտակ, նաժ, թոզոր (Հայաստան) : Գեռնապիտտակի տունկը վայրի վիճակի մէջ կը հասնի Տարֆուր, Բօրոֆան (Սուտան) և Սպիտակ Նեղոսի հողամասին մէջ : Առատօրէն կը մշակուի տաք երկիրներու մէջ, մասնաւորաբար Պրազիլիա, Մեքսիկա, Հարաւային Ամերիկայի զանազան հանրապետութիւններուն մէջ, Անթիլեան կղզիներուն մէջ, Սենեկամպիա, Կինէ, Սենեկալ, Հնդկաստան, Հնդկալին, Եգիպտոս, Սուտան, Սիլիլիա, Ալճէրիա, Սպանիա և Միացեալ Նահանգներ : Սենեկալի հարստութեան հիմն է : Սենեկալ՝ 1928ին՝ 413,356 թօն (մէկ թօնը 1000 քիլօկրամ է) կճեպով զեռնապիտտակ և 208,751 քիլօկրամ իւզ արտածած է՝ մօտ 600 միլիոն ֆրանքի ամբողջական արժէքով : Մինչդեռ իր արտածած միւս բոլոր արտադրութիւններուն արժէքը միայն 165 միլիոն 250 հազար ֆրանք էր :

Գեռնապիտտակին բնավայրը Պրազիլիա է, ուրիշ 16րդ դարու սկիզբը փորթուկալցի գերեզմաններու միջոցաւ ներմուծուած է Ալբերտեան Ափրիկէ : Ափրիկէի մէջ աւանդովէս մը կայ զեռնա-



Պատկեր 1. — Գեռնապիտտակի տունկի մը արմատները, որոնք ազօր հաւաքող բակիթիաներու կողմէ կազմուած գնօրէններ կը ցուցնեն :

Հաւաքոյն արդիւնքներ ապահովուած են այն պայմաններուն տակ, ուր տարեկան բնականոն անձրեւաթափը 105—135 սանթիմէթը է: Գետնապիտտակները յաճախ կ'աճին ոռոգումով: Ասով մէկտեղ, որոշ արդիւնքներ ձեռք ձգուած են, առանց ոռոգումի, ուր տարեկան անձրեւաթափը 48 սանթիմէթէ պակաս եղած է: Միւս կողմէ, ցած հովիտներու մէջ, 135—150 սանթիմէթ անձրեւաթափով, լաւ բերքեր արտադրուած են:

Թեթեւ, աւազուտ կրակաւային հողերը լաւագոյն հողերն են վաճառելի գետնապիտտակի արտադրութեան համար: Գէշ ուրդուած կամ աղի հողերը անյարմար են: Խոզերը սնուցանելու յատուկ կերի բերքը ու է հողի մը մէջ, խիստ կաւային ծանր հողերու բացառութեամբ, կարելի է հասցնել: Բակլայի և փաթաթէսի լաւ բերք տուող աւազուտ կրակաւային հողերը, գետնապիտտակի աճման յարմար նկատուած են:

Եգիպտոսի մէջ գետնապիտտակը ամառնային բերք մըն է: Բաւականաչափ փխրուն հողերը յարմար են իր մշակութեան: Ահա այս պատճառով, անապատը եզերող աւազային փխրուն հողերու մէջ է որ հաստատուած են եգիպտական գետնապիտտակի արտերը: Եգիպտոսի մէջ, ուր տարեկան անձրեւաթափի քանակը, բացարձակապէս անբաւական է ու է բոյս իր բնականոն աճման համար, առանց կարգին գետնապիտտակն ալ, մինչև որ տունկերը կատարելապէս հաստատուին, ամէն 7—10 օրը անգամ մը, խնամոտ և յաճախակի ջրումի կարօտ է:

ՀՈՂԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԸ

Գետնապիտտակի հողին ընտրութեան մէջ երկու բաներ պէտք է նկատի առնուին: Առաջին՝ հողին յատկութիւնն ու յարմարութիւնը և երկրորդ՝ նախորդ տարիներու մէջ կիրարկուած փոխցանի դրութիւնը: Գետնապիտտակի բերքը վնասակար խոտերէ շատ կը վնասուի, հետեւաբար նախապէս մաքուր պահուած բերքի մը յաջորդելու է: Փաթաթէսի և անուշ հողկիթի (փաթաթա) նման մարկեղումի ենթակայ բերքերէն ետքը լաւ կը յարմարի: Զմեռուան վարսակին ալ, շատ անգամ ուշացած գետնապիտտակ կը յաջորդէ: Եգիպտացորենի կամ բամպակի կոթերը շատ կը դժուարացնեն գետնապիտտակի մշակութիւնն ու քաղումը. այս պատճառով արտերը լաւ մը մաքրուելու կամ այդ կոթունները խորունկ կերպով հերկուելու են: Միեւնոյն հողին վրայ, 3—4 տարին անգամ մը միայն գետնապիտտակ տնկուելու է: Վարին եգիպտոսի մէջ, երեքնուկէ (եգիպտացիները պէքսիմ կը կոչեն Աղեքսանդրիական երեքնուկը) ետքը ցանուած գետնապիտտակը լաւագոյն արդիւնքը կուտայ: Բայց շատ անգամ ալ բակլայէ և գարիէ

ետքը կը ցանեն: Շատ անգամ կը յաջորդէ նաեւ սեխի: Տէլթայի հիւսիսային մասին մէջ ալ, բամպակի անյարմար հողերը կը յատկացուին գետնապիտտակի մշակութեան:

Ցանքէն առնուազն վեց չաբաթ առաջ հողը հերկուելու է: Հողին անթերի պատրաստութիւնը անհրաժեշտ է: Եգիպտոսի մէջ ալ հողերը երկու ուղղութեամբ 2—3 անգամ կը հերկեն և 15 սանթիմէթ խորունկութիւն մը յարմարագոյն կը նկատեն: Որովհետեւ մէթը խորունկ հողերու մէջ, քաղը կը դժուարանայ և այս կերպով շատ խորունկ հողերու մէջ, քաղը կը դժուարանայ և այս կերպով բերքին մէկ մասը կը կորսուի: Վերջին հերկումէն ետքը հողը կը քաքանեն և յետոյ ածուներու կը բաժնեն: Տեղ տեղ ալ, արտերը, բամպակի արտերուն նման կ'աղօսեն և գետնապիտտակը գիծերու վրայ կը ցանեն:

ՊԱՐԱՐՆԵՐԸ

Գետնապիտտակի հետ փոխցանի ենթակայ բերքը, գետնապիտտակի բերքէն աւելի, անասունի աղբով աղբուելու է: Գետնապիտտակի բերքին կրնայ տրուիլ մի քիչ լաւ փոտած աղբ՝ հողին հետ լաւ մը խառնուելու պայմանով: Ցանքի ժամանակ թարմ աղբ տրուելու է, որովհետեւ ասիկա թերի լեցած պատիճներու սակը զգալիօրին կ'աւելցնէ:

Միացեալ Նահանգաց մէջ, արուեստական պարարներու խառնուրդէ մը, որ կը բովանդակէ հարիւրին 8 փոսփորական թթու, հարիւրին 2 ազօթ և հարիւրին 2-3 փոթաս, ամերիկեան մէկ լըծվարի վրայ 300-500 ամերիկեան քաշ կը գործածեն և լաւ արդիւնք կը ստանան: Պարարի այս խառնուրդն է որ կը գործածուի նաեւ առհասարակ բամպակի և եգիպտացորենի համար: Փոխցանի բերքերը երբ ըլլան հողաչէն բերքեր (բակլայ, երեքնուկ, առուոյտ, վիզ ևն.) արուեստական պարարներու գործածութիւնը կը կորսնցնէ իր կարեւորութիւնը: Արուեստական պարարները պէտք է գործածուին ցանքէն անմիջապէս առաջ: Եթէ 3-4 օր առաջ գործածուին, աւելի լաւ խառնուած կ'ըլլան հողին հետ:

Եգիպտոսի մէջ կը գործածեն անասունի աղբը, ինչպէս նաեւ փոսփէր (մարդու չորցած քակոր): Այս աղբը կուտան վերջին հերկումէն առաջ: Եգիպտոսի մէջ փոսփէր (poudrette) առանձին կամ ոռոփէրֆոսփաթի հետ խառն գործածութիւնը լաւագոյն արդիւնքները տուած է:

Հէքթարի մը (10000 քառակուսի մէթր) 60 քիլոկրամ կիրի կամ նատրոնի բորակածնաթ (nitrate de chaux ou de soude), 400 քիլոկրամ սուլփէրֆոսփաթ և 250 քիլոկրամ փոթասային աղբ (sylnite) տրուելով 1533 քիլոկրամ գետնապիտտակ ստացուած է: Մինչև գեռ չաղբուած մասերը հազիւ 800 քիլոկրամ տուած են:

ԿԻՐԻՆ ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆԸ


Գետնապիտակի պատիճներուն աճման համար կիրը անհրաժեշտ է։ Այն հողերը, որոնք զուրկ են կիրէ, իւրաքանչիւր տմերիկեան լծվարի 400-800 տմերիկեան քաշ կիր տալու է։ Կիրը՝ արուեստական պարարներու հետ միասին գործածուելու է, այլ այս երկուքին միջեւ 8-10 օր միջոց մը դանուելու է։ Կիրը՝ հերկումէ ետքը հողին վրայ սփռուելու և յետոյ ցաքանուելով մակերեսին հետ խառնուելու է։

ՓԱՅՏԻ ՄՈՆԻՐՆԵՐԸ

Կարծր փայտի մօխիւնները փափաքելի պարարներ են գետնապիտակին համար, որովհետեւ կը պարունակեն թէ փոթաս և թէ կիր։ Կաշնի նման (մեռե) կարծր փայտի չի լուացում մօխիւններէ տմերիկեան լծվար գլուխ 800—1200 տմերիկեան քաշ կրնայ սփռուիլ արտին վրայ։ Շոճի նման կակուղ փայտի մօխիւնները, ինչպէս նաև բաց օղին տակ մնացած կարծր փայտերու մօխիւններն ալ, իբրեւ պարար, նուազ արժէք կը ներկայացնեն։

ԳԵՏՆԱՊԻՍԱԿԸ ԻՐԻՆԻ ԱԶՈԹԻ ՀԱՒԱՔԻԶ

Ընդազգիները օժտուած են լաւագոյն յատկութեամբ մը։ Իրենց արմատներուն վրայ գտնուած գնդիկներով, կը ծծեն օղին ազատ ազօթը և այս կերպով կը սատարեն հողին բարելաւման։ Այս գնդիկները (nodules) լեցուն են ազօթային բակտերիաներով, որոնք, ուրիշ կարգ մը ցպիկներու նման մակարոյճներ չեն։ Այս ազօթային ցպիկներու և ընդազգի բոյսերու միջև իրերաօգնութեան տեսակ մը գաշինք կնքուած է։ Ընդազգի բոյսին արմատները, իբր յենարան և իբր բնակարան կը ծառայեն ազօթային ցպիկներու։ Այս վերջիններն ալ, այս ծառայութիւնը լիուլի կը փոխարինեն, բոյսին հայթայթելով կենսատու սնունդ մը՝ ազօթը։ Այս փոխադարձ օգնութեան դաշնակցութիւնը, գիտութեան մէջ կը կոչուի Symbiosis։ Գետնապիտակն ալ, իբրեւ ընդազգի ազնուացեղ ընտանիքին պատուական մէկ անդամը, իր արմատներուն վրայ ապաստան դառնալով այս օգտաշատ ցպիկներուն միջոցաւ, մթնոլորտին մէջ ձրիօրէն ամրարուած ազօթով կը պարարտացնէ հողը։ Միայն թէ՛ քաղի ժամանակ, իբր գետնապիտակի արմատներուն մեծագոյն մասը արմատախիլ ըլլալով դուրս հանուի, հողին բերրիական ուժը իր նուազագոյն աստիճանին կ'իջեցուի։ Մինչդեռ այս պարագան գոյութիւն չունի առօրյոյ, երեքնուկի նման ուրիշ ընդազգիներու քով, որոնց արմատները կը մնան հողին մէջ։ Վաշինկիթնի երկրագործական կեդրոնական Նախարարութեան



Պատկեր 2. — Գետնապիտակի հունքեր։ Վերինները՝ ստորինպիտակներ և քաղիքսիւփ ըլլալով, մեկնայով քաղուած են։ Վարինները՝ քրկից մաք րուած և ձեռով զտուած լաւ պիտակներ են։

կողմէ, ընդազգիներու արմատային գնտիկները չիչերով կը բաժնուին երկրագործներուն, իրենց անբերրի հողերը պատուաստելով բերրիացնելու համար: (Պատկեր 1):

ՀՆՏԱՅՈՒ ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿՆԵՐՈՒՆ


ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԸՆՏՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Բարձրատիճան հնտացուն գետնապիստակի համար ալ այնքան կարեւոր է որքան եգիպտացորենի, ցորենի և ուրիշ հողային բերքերու համար: Գետնապիստակի գէշ հնտացուն ուղղակի կերպով պատասխանատու է գէշ բերքի արտադրութեան: Լուստմիտ ագարակատէրներ պարտին մասնաւոր ուշադրութիւն ընծայել այս կարեւոր կէտին: Պետական պաշտօնատուները բամպակի, եգիպտացորենի և ցորենի հնտացունները ազնուացնելով, հսկայ արդիւնքներ ձեռք բերած են: Նոյն պատեհութիւնը կայ նաեւ գետնապիստակին համար: Հնտացու արտադրելու լաւագոյն մէթոտը, մասնաւոր հողամաս մը հնտացուի յատկացնել և հոն ցանել միայն նախորդ տարի բազմարդիւն և ուժեղ սուռնիկներէն ընտրուած հունտերը: Եթէ այս մէթոտին հետեւիլ կարելի չէ, այն ժամանակ գետնապիստակի արտին այն մասը, որ աճումի լաւագոյն յատկութիւններով օժտուած է, զատէն հաւաքելու և դոյացած գետնապիստակները հնտացուի յատկացնելու է: Հնտացու գետնապիստակները լիովին հասուննալէ ետքը, պայծառ օդի մը ատեն խնամքով պեղելու և ձողերու շուրջ փոքր գէղեր չինելու է: Այս գէղ չինելու գրութիւնը քիչ վերջը պիտի բացատրենք: Առնուազն ութը շաբթուան չորացումի շրջանէ մը ետքը, հնտացու գետնապիստակները պէտք է քաղել ճիւղերուն վրայէն և պարկերու մէջ գնելով ամբարել չոր չէնքերու մէջ: Լաւագոյն է պարկերը կախել ձեղուններէ, մուկերուն վրասները չէգոքացնելու համար: Այն տեղեր, ուր 20 ամերիկեան գրիւէ (պուլը) (մէկ ամերիկեան գրիւը մօտ 36 ուկէս լիգր է) աւելի հնտացուի պէտք չկայ, քաղը պէտք է կատարուի ձեռքով: Ասկէ աւելի հնտացուի պէտք եղած ատեն, այն ժամանակ գետնապիստակի քաղող մեքենայի մը պէտք կայ, պայմանաւ որ պատիճները չի կոտրուին: (Պատկեր 2):

ՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՆՏԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Զմրան ընթացքին, երբ աւելորդ ժամանակ կայ, հնտացու գետնապիստակները վար առնուելով, ձեռքով պէտք է խնամքով մաքրուին և ունէ խեչերանք մէկգի զրուին: Եթէ մաքրուելիք հնտացուն մեծաքանակ ըլլայ, քաղող մեքենայով պէտք է մաքրուին և պարապ կամ գէշ պատիճները, ինչպէս նաեւ մնացորդ

ցօղունները կամ թափթփուքները զատուին: Կարեւոր է նաեւ մաքրել ամբողջովին պատիճներուն կոթերը: Այս մաքրումէն ետքը, գետնապիստակները պէտք է նորէն զրուին պարկերու մէջ և կախուած մնան մինչեւ տեղադրութեան թուականը:



Պատկեր. 3. — Միաձի գետնապիստակի սերմնացան մեքենայ:

Գետնապիստակի հունտը ծածկող բարակ կարմիր պահարանին տրուած ունէ վրաս կամ հարուած, կրնայ վնասել ծրման: Գետնապիստակի խոշոր պատիճաւոր տեսակները, տեղադրութեան թուականին, երկու շաբթուան մէջ ձեռքով կը փեճեկուին: Սպանիական տեսակները ձեռքով փեճեկել դժուար է, բայց երբ մեծաքանակ ըլլան, կարելի է խնամքով դործածել, առանց կարեւոր վնաս պատճառելու, ձեռքի փոքր փեճեկող գործիքներ: Պատիճները երկուքի կոտրելով կարելի է կատարել փեճեկումը: Ասոր համար նախ բաւականաչափ սպանիական գետնապիստակի հնտացու իրենց պատիճներովը միասին 12-24 ժամ կը թրջուին պող ջուրի մէջ, յետոյ կը քամուին 1-2 ժամ, կամ մինչեւ որ չորնան սաւաններու վրայ կը փռուին և յետոյ կը փեճեկուին: Յանքը կը կատարուի ձեռքով կամ գետնապիստակի ցանքի մեքենայով: Փեճեկուած հունտերը, ունէ պարագայի տակ, ցանքէն առաջ պէտք չէ սր թրջուին, որովհետեւ հունտը ուռելով կը պատռէ կարմիր պահարանը և կը վնասէ ծրմին: Այն արտերու մէջ, ուր սալամանտները, խլուրդները կամ ուրիշ կրծող անասունները, ցանքէն ետքը կ'աւերեն գետնապիստակի հունտը, այս վերջինը պէտք է փռել տախտակաման վրայ, վրան սփռել լուծոյթ մը՝ բաղկացած մէկ մաս շոճի խոյձղանէ և մէկ մաս քարիւղէ և լաւ մը խառնել: Հնտացուները պէտք չէ ամբողջովին ծեփել այս լուծոյթով: Փոքր մաս մը բաւա-

կան է կրծող անասունները վանելու համար: Փեճեկուտ չնտացու-
ներուն վրայ այս լուծոյթին չափաւոր կերպով կիրարկուեմը, եթէ
գործը խնամքով տեղի ունեցած ըլլայ, չի վնասեր անոնց ծլական
յատկութիւններուն:

ԼԾՎԱՐԻ ՄԸ ՀԱՄԱՐ ՊԵՏՔՅՈՒ ՀՆՏԱՅՈՒՆ

Գետնապիտտակի ցանքը կը կատարուի, ըլլայ փեճեկուտը, ըլ-
լայ անփեճեկ հունտերով: Ամերիկեան լծվար մը արտը, անկար-
կութեան հեռաւորութեանց համեմատ, 32-48 ամերիկեան քաշ
սպանիական փեճեկուտը գետնապիտտակի պէտք ունի: Այս տարա-
ծութեան համար, անփեճեկ հունտէն 23-34 ամերիկեան քաշ պէտք
է: Գետնապիտտակի խոշոր տեսակներէն, ամերիկեան լծվար մը
ցանելու համար, 24-30 ամերիկեան քաշ անփեճեկ հունտ պէտք է:

Եգիպտոսի մէջ, իւրաքանչիւր ծակի մէջ 1-3 փեճեկուտ հունտ
կը դնեն, զանոնք 12 ժամ ջուրի մէջ թրջելէ ետքը: Եթէ հունտը
փեճեկուտ է, մէկ եգիպտական լծվարը (ֆէտտան) մէկուկէսէն 2
գրիւ (0,63էն 0,84 ամերիկեան գրիւ կամ 24,75էն 33 լիգր) կ'առ-
նէ, իսկ եթէ հնտացուն անփեճեկ է, այն ատեն մէկէն մէկուկէս
գրիւ (0,42էն 0,63 ամերիկեան գրիւ կամ 16,50էն 24,75 լիգր) կը
բաւէ: Եգիպտոսի մէջ անփեճեկ հնտացու շատ քիչ կը գործածուի:
Մարդ մը օրը մէկ եգիպտական լծվար (ֆէտտան) կը ցանէ:

ՅԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Միացեալ Նահանգներու մէջ առեւտրական գետնապիտտակին
մեծագոյն մասը Ապրիլ 10էն Մայիս 10ի մէջ կը ցանուի: Բայց
ամէն պարագայի տակ, գետնապիտտակի ցանքը պէտք է սկսի այն
ատեն, երբ հողը ըստ բաւականի տաքցած է: Խոշոր տեսակները,
բազմամասն սպանիական տեսակին, աճումի աւելի երկայն չըր-
ջան մը ունին: Կանուխ ցանքերը միշտ լաւագոյն արդիւնքներ
տուած են: Մինչեւ Յուլիս 1 ուշացած սպանիական տիպի ցանքե-
րը, լաւ բերք եւս տուած են Մ. Նահանգներու հարաւային ծովե-
ղերեայ շրջաններուն մէջ: Այն պարագային, ուր գետնապիտտակի
ընդարձակ մշակութիւն կատարուի, ցանքերը պէտք է երկարաձգ-
ուին 3-4 շաբաթ, որպէս զի յառաջիկային ամբողջ բերքը մէկ
անգամէն պատրաստ չըլլայ քաղի համար:

Վերին Եգիպտոսի մէջ ցանքերը տեղի կ'ունենան Մարտի եւ
Ապրիլի մէջ: Իսկ Վարի Եգիպտոսի մէջ ցանքերը կ'սկսին Մարտի
սկիզբէն եւ կ'երկարաձգուին մինչեւ Մայիսի վերջը: Բայց Շարքիէ
Նահանգին մէջ, ուր կեդրոնացած է եգիպտական գետնապիտտակի
մշակութիւնը, ցանքերը կը կատարուին Ապրիլ մէկէն մինչեւ Մա-
յիս 15:

ՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգները, ուր մեքենայի գործածութիւնը կը
տիրապետէ նաեւ երկրագործութեան ամէն ճիւղին մէջ, ունի իր
մասնաւոր մեքենաները գետնապիտտակի մշակութեան համար ալ:
Հոն գետնապիտտակի արտերը լաւ մը հերկուելէ եւ հարթուելէ ետք,
միաձի մեքենայով մը կ'ակօսուին, պարարը կը բաժնուի այս
գիծերուն մէջ եւ յետոյ գետնապիտտակի միաձի ցանքի մեքենա-
յով, հունտերը կը ցանուին: Երկձի ցաքանէ, միաձի ակօսիչ մե-
քենայէ, պարարի երկու բաշխիչէ եւ պիտտակի երկու շարքացան մե-
քենայէ բազմաքան ցանքի կազմած մը, օրական 10—12 ամերիկեան
լծվար կրնայ ցանել: Փոքր հողամասի մը վրայ, երկու մարդ զոյգ
անյուրովորով մը կրնայ օգտակար աշխատանք տանիլ: Նախ արտին
մէկ մասը կը հարթուի եւ կը ցաքանուի: Յետոյ զոյգ անյուրովորը
երկուքի կը բաժնուի: Ձիուն մէկովը արտերուն գիծերը կը քաշ-
ուին եւ պարարը կը բաժնուի, իսկ միւս ձին գետնապիտտակի
ցանիչ մեքենան քաշելու կը գործածուի: Այս կերպով օրական 4—5
ամերիկեան լծվար կրնայ ցանուիլ:

ՏՈՒՆԿԵՐՈՒՆ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Գետնապիտտակի ցանքերուն հեռաւորութիւնը կախում ունի
մարկիզումի համար գործածուելիք գործիքներէ, հողին յատկու-
թիւնէն եւ գետնապիտտակներու տեսակէն: Կարգերու մէջ սովորական
թիւնէն հեռաւորութիւնը 90 սանթիմէթր է, բայց ասիկա 80էն 105 սան-
թիմէթրի մէջ կը տարուբերի տեղական եւ տեսակի պայմաններուն
համեմատ: Մ. Նահանգաց մէջ եղած փորձերը կը ցուցնեն թէ՝
գետնապիտտակի Սպանիական եւ Վիրճինիա Պընճ տեսակները երբ
շարքերու վրայ շատ խիտ ցանուին, ամենաբարձր բերքերը կ'ա-
պահովուին, իսկ լաւագոյն բերքերը ստացուած են այն շարքերուն
վրայ, որոնք իրարմէ 75 սանթիմէթր հեռու են եւ իրենց վրայ
գտնուած բոյսերն ալ իրարու մէջ 7ուկէս սանթիմէթր հեռաւորու-
թիւն ունին: Խիտ ցանք մը միշտ լաւ արդիւնքներ տուած է:
Մանաւանդ Սպանիական տեսակին համար ասիկա գլխաւոր պայ-
ման է:

Հետեւեալ ցանկը՝ գետնապիտտակի զանազան տեսակներու
ցանքի հեռաւորութիւնները կը ցուցնէ. —

Տեսակ	Շարքերու միջեւ	Շարքերու վրայ
Սպանիական	80—95 սանթիմէթր	17½—25 սանթիմէթր
Վալանսիա	80—105 »	20—30 »
Թէնէսի Ռէտ	80—105 »	20—30 »
Ճիօրճիա Ռէտ	80—105 »	20—30 »



Տեսակ	Շարփերու միջեւ	Շարփերու վրայ
Վերճինիա Պընչ	80—95 սանթիմէթր	20—30 սանթիմէթր
Վերճինիա Ռընըր	95—105 »	30—45 »
Նօրթի Բարօլայնա	85—95 »	30—37 1/2 »
Ափրիկեան	85—105 »	30—45 »

Եզրիպտոսի մէջ, գետնապիտտակի արտերը ածուներու բաժնէ ետքը. կաւային հողերու մէջ իրարմէ 50—55 սանթիմէթր և աւազային հողերու մէջ 60—65 սանթիմէթր հեռաւորութեամբ ծակեր կը բանան, հունտը կը դնեն այս ծակերու մէջ և յետոյ ձեռքով կամ ոտքով կը ծածկեն: Շարքիա նահանգին մի քանի տեղերը միայն անփեճիկ հնաացու կը գործածուի և ասոնք իրարմէ 30 սանթիմէթր հեռու եզող ծակերու մէջ կը ցանեն: Երբ ցանքը շարքերու վրայ կատարուի, այս շարքերուն մէկ կատարէն միւս կատարը ունեցած հեռաւորութիւնը 60 սանթիմէթր կը ձգեն և այս շարքերուն հարաւային կողմը, իրարմէ 50 սանթիմէթր հեռաւորութեամբ, ծակեր բանալով, հունտերը կը ցանեն յար և նման բամպակի ցանքին:

ՀՈՒՆՏԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ԽՈՐՈՒԹԻՒՆ


Թեթեւ աւազային հողերու մէջ, գետնապիտտակի հունտերը Յուլէսէն 5 սանթիմէթր և ծանր հողերու մէջ Չուկէսէն 3 սանթիմէթր պէտք է ծածկուին: Խոնաւ հողերու մէջ հունտերուն խորութիւնը, չափաւորապէս չոր հողերու բազմապատմամբ, աւելի նուազ ըլլալու է: Հունտերուն վրայ ծածկուած հողին թեթեւօրէն ձնշումը փափաքելի է: Գետնապիտտակի սերմնացան մեքենաները այս փափաքելի ձնշումը շատ լաւ ի գործ կը դնեն: Հունտերուն մեքենայէն կանոնաւորաբար իյնալը և պատշաճօրէն ծածկուիլը, մանաւորաբար մեքենավարին խնամքէն կախում ունի: (Պատկեր 3):

Մ Ա Ր Կ Ե Ղ Ո Ւ Մ

Անհրաժեշտ է խիտ խիտ մարկեղել (չափալամաֆ) գետնապիտտակի արտերը, մինչեւ որ ցօղունները ծածկեն հողին մակերեսը: Գետնապիտտակի առատ բերք ստանալու համար յաճախակի թեթեւ մարկեղել կը կազմէ յաջողութեան բանալին: Ծանր անձրեւներէ ետքը, հողը պատշաճօրէն չորնալուն պէս, մակերեսը քրքրուելու և այս կերպով հողին խոնաւութիւնը պահպանուելու է: Միացեալ նահանգներու մէջ, գետնապիտտակի արտերը միջին հաշուով հինգ անգամ կը մարկեղեն: Բայց այս մարկեղումներու թիւը օդային պայմաններէն կախում ունի: Աւելորդ է ըսել թէ՛ Մ. Նահանգներու մէջ այս մարկեղումները կը կատարուին մարկեղի մասնաւոր


մեքենաներով և աւազային հողերու յատուկ փնասակար խոտերու խիլէ մեքենաներով: (Պատկեր 4 և 5):

Սա մոռնալու է՝ թէ՛ երբ երկրները սկսին կազմուիլ, ցօղունները ունէ պարագայի տակ զրգուելու է և պատիճները կազմուելու սկսած ատեն միայն շարքերուն մէջտեղի մասերը թեթեւօրէն մարկեղելու է: Այս



Պատկեր 4. — Միաձի մարկեղի մեքենայ

կերպով թէ՛ փնասակար խոտերը կ'ոչնչացուին և թէ՛ բոյսերուն երկու կողմերուն վրայ բարակ հողի թեթեւ խաւ մը աւելցուելով, նոր պատիճներու կազմութիւնը կը զիւրացուի:




Պատկեր 5. — Վնասակար խոտերու խիլէ մեքենայ մը, որ գետնապիտտակի առաջին մարկեղման ատեն կը գործածուի:

Եզրիպտոսի մէջ, գետնապիտտակի արտերը, հողը կազմու պահելու նպատակով, երկու անգամ թեթեւօրէն և ձեռքի մարկեղներով, կը մարկեղեն: Ասոնցմէ զատ, մէկ երկու անգամ ալ ձեռքով փնասակար խոտերը կը մաքրեն: Մարկեղումի խորունկութիւնը միջին հաշուով 15 սանթիմէթր է և այս գործողութիւնը կը կ'իրարկեն, բոյսերը հողին երեսը չծածկելէ առաջ: Երբեմն ալ անհրա-

Ժեշտ կը դառնայ ճիւղերը հողով պատել, որպէսզի գոյանան բեղուն ծաղիկներ, որոնք կ'երեւին դուրսի հանգոյցներուն վրայ։ Այն առատ գեղին ծաղիկները, որոնք կ'երեւին ճիւղերու վերի մակերեսով ժայ, ամուլ են։ Անոնք միայն, որ կ'երեւին ճիւղերու վարի մակերեսով ժայ, սեռային են և պտղաբեր։ (Պատկեր 6)։

ՈՒՈԳՈՒՄ


Եգիպտոսի մէջ ամէն ինչ միայն սուղումով կ'արտադրուի։ Գետնապիտտակի արտերն ալ կ'սուղուն կանոնաւորաբար։ Առաջին ջուրը կը տրուի ցանքէն անմիջապէս ետքը և հինգական օր անջրպետով ջրումները կը շարունակուին, մինչեւ որ բոյսերը գլուխն յցեն հողէն դուրս։ Ասկէ ետքը ջրումները՝ 15 օր ան միջոցով կը շարունակուին, մինչև Օգոստոս և Սեպտեմբեր, որ ատեն կը սկսին ութը տասը օրը անգամ մը խիտ խիտ ջրել, բեղուն ծաղիկներուն հողին մէջ մուտքը դիւրացնելու համար։ Բոլոր ջրումները պէտք է ըլլան թեթեւ և յամրաբար։ Ջրումներուն թիւը հողին պայմաններէն կախում ունի։ Եգիպտոսի մէջ, գետնապիտտակի արտերը 12էն սկսեալ մինչեւ 26 անգամ կը ջրուին։



Պատկեր 6. — Գետնապիտտակի ծաղիկ եւ պսիճները կազմող երիբ։

ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մ. Նահանգներու մէջ հասնող գետնապիտտակի որոշ տեսակները 9—10 հատ են։ Վիրճինիա Պընճ, Վիրճինիա Ռընըր և Նօրթ Բարօլայնա տեսակները խոշոր պատիճաւոր գետնապիտտակի տեսակներ են։ Սպանիականը, որ իր մէջ կը բովանդակէ փոքր Սպանիական, միջին ճերմակ Սպանիական կամ բուն Սպանիական և Խոշոր կամ Ազնուացած Սպանիական տեսակները, կը գործածուի իւղի արտադրութեան համար։ Կարմիր կամ մթազոյն միջուկներով



Պատկեր 7. — Վիրճինիա Պընճ գետնապիտտակներ։

տեսակները յարգի չեն և թէ՛ ասոնց ճերմակ տեսակներու հետ խառնուրդը, այս վերջիններուն աստիճանը կ'իջեցնէ։

Վիրճինիա Ռընըր.— Աճման յորդ յատկութիւն մը ունի և կը կազմէ պատիճներ թէ՛ բոյսին յատակին և թէ՛ ճիւղերուն երկայնքին վրայ։ Դժուար է պեղել, առանց մաս մը գետնապիտտակ կորսնցնելու և գէղի վերածել՝ առանց պիտտակները օգին ազդեցութեան ենթարկելու։ Էն աւելի կը մշակուի Մ. Նահանգներէն Վիրճինիա Նահանգի հարաւ արեւելեան և Հիւսիսային Քարալօյնա Նահանգի հիւսիս արեւելեան մասերուն մէջ։

Նօրթ Բարօլայնա.— Վերի տեսակին կը նմանի, բայց աւելի փոքր աստիճանով ամէն կերպով։ Ափրիկեան տեսակի յատկու-

տեսակ մըն է, Պատիճները 2-3 պիտտակ կը բովանդակեն: Իր գոյնը մշակուած հողին գոյնին համեմատ կը տարբերի: Բնդհանրապէս բաց գեղին կամ մոխրագոյն է: Իր փեճեկը բարակ և երկայն որոշ գիծեր ունի: Երկու պիտտակ պարունակող պատիճը 20-25 միլիմէթր երկայնութիւն ունի, իր պիտտակներուն պահարանը թեթեւ կարմրեկ է: Բոյսը՝ իր աճման տարածական յատկութեամբ՝ շատ կը նմանի Սենեկալ և Կամպիա մշակուած տեսակին: Իր ցողունները թեթեւ կերպով մազոտ են և պիտտակներն ալ բուրշի և կանոնաւոր ձեւով, յար և նման են Սենեկալի մէջ հասնողներուն: Իր պիտտակը, շատ մը պարագաներու տակ, ծալալի տեսակին ձեւը կը յիշեցնէ, թէեւ այս վերջին բոյսին ճիւղերը բոլորովին ուղիղ են: Հաւանական է որ այս պալաւի տեսակը՝ նախապէս Արեւմտեան Ափրիկէէն ներմուծուած և յետոյ Արեւելքէն բերուած տեսակներուն միջեւ խառնարոյս մըն է:

Նապարասի. — Այս տեսակը կը կոչուի նաեւ Հինգի, Մասրասի, Աֆրանկի: Իր կեդրոնական ցողունները ուղիղ և ճերմակ մետաքսային մազերով ծածկուած են: Իր պիտտակները խոշոր և ընդհանրապէս պատիճներուն մէջ երեք հատ կը գտնուին: Երեք պիտտակով պատիճները 40—45 միլիմէթր երկայնութիւն ունին, իսկ երկու պիտտակ պարունակողները՝ 30—35 միլիմէթր և մէկ պիտտակ ունեցողները՝ 18 միլիմէթր: Այս տեսակին տերեւները Պալասի տեսակին տերեւներէն աւելի խոշոր են և աւելի թեթեւ կանոնէ գոյն մը ունին: Պիտտակներուն ձեւը շատ անկանոն է: Այս տեսակին բնավայրը Հարաւային Հնդկաստան կը նկատուի:

Էլ Հուրի. — Այս տեսակը Գաւաւալի, Ռումի և երբեմն ալ Սայիսի ևս կը կոչուի: Երկու խորշով շատ խոշոր պիտտակներ ունի. երբեմն ալ պիտտակները նոյն պատիճին մէջ, զատ զատ պահարաններու մէջ կը գտնուին: Իր պիտտակին ձեւը կը նմանի Մօզամպիքի պիտտակին: Երկու խորշով պատիճներուն երկայնութիւնը 30—40 միլիմէթր և շատ քիչ գտնուող միախորշ պատիճներուն ալ 22—26 միլիմէթր է: Այս տեսակին ճիւղերը տարածական են և ճերմակ մազերով ծածկուած: Ին երկայն տերեւը ունի և իր ճիւղերը սովորաբար նուազ բարակ են:

Այս եզրագծական տեսակներէն Նապարասին, բերքի և զինի տեսակէտով լաւագոյնն է: Նապարասի տեսակէն ետքը Պալասին կը գրաւէ երկրորդ աստիճանը: Էլ Հուրի տեսակը քիչ բերք կուտայ և իր խնդրանքը քիչ է տեղական սպառումին համար:


Ք Ա Ղ Ո Ւ Մ Ը

Ցուրտերէն ճիւղերը խաթարուելէ առաջ, գետնապիտտակները պէտք է քաղուին: Քաղումի թուականը կը ճշգուի երկու

կերպով: Առաջին՝ տերեւները թեթեւ կերպով կը դեղնին: Երկրորդ՝ պատիճները կը քննուին: Եթէ պիտտակները լիապէս աճած են և փեճեկներուն ներսի մասը սկսած է գունաւորելու և աղօտ երակներ ցուցադրելու, ասոնք կ'ապացուցանեն թէ՝ քաղի համար պատրաստ են: Կարգ մը մշակներ, գետնապիտտակները լիապէս աճելէ առաջ, կ'աճապարեն զանոնք քաղել, ինչ որ ճիշդ չէ: Ուրիշներ ալ քաղը կը յետաձգեն, մինչեւ որ գետնապիտտակներուն տերեւները թափին: Աս ալ սխալ ծայրայեղութիւն մըն է: Նման յապաղումի մը հետեւանքով, Սպանիական տեսակին միջուկները, մասնաւորաբար անձրեւոտ եղանակի մը ատեն, ծլելով մեծաքանակ կ'ոչնչանան:

Ք Ա Ղ Հ Ա Ն Ի Մ Է Թ Ո Տ Ն Ե Ր Ը

Միացեալ Նահանգներու մէջ մասնաւոր արօրներ և մեքենաներ կան, գետնապիտտակի արմատային գրութեան մեծագոյն մասը քակելով, դուրս հանելու համար:




Պատկեր 9. — Գետնապիտտակ քաղելու արօր:

Քաղելով, դուրս հանելու համար: (Պատկեր 9 եւ 10): Կը գործածեն նաեւ փաթաթէս քաղելու մեքենաները, որոնց միջոցաւ ոչ միայն գետնապիտտակները հողէն կը հանուին դուրս, այլ արմատներուն կպած հողերն ալ կը թօթուուին (Պատկեր 11 եւ 12): Այս մեքենաներուն խորութեան աստիճանը ճշգուշելով, արմատները կրնան այնպէս մը կտրուել, որով թէ՛ պատիճներուն կորուստին առաջքը կ'առնուի և թէ՛ աղօթային գետիկներուն մեծագոյն մասը հողին մէջ կը ձգուի: Պեղումը պէտք չէ սկսիլ առաւօտուն, մինչեւ որ ճիւղերուն ցողերը չի շոգիանան: Պեղել այնչափ, որչափ որ կարելի է նոյն օրուան մէջ գէղի վերածել:

ՊԵՂՈՒՄԷՆ ԵՏՔԸ ՅՕՂՈՒՆՆԵՐՈՒՆ ԶՈՐԱՅՈՒՄԸ


Գետնապիտտակի ցողունները քակուելէ և իրենց հողերը թօթուելէ ետքը, հողին վրայ կը տարածուին և կամ փոքր խուրձերու տեղի վերածուելով կը ձգուին, մինչեւ որ իրենց տերեւները թեթեւ կերպով թօշնին: Պէտք չէ չափազանցել և թողուլ որ այս տերեւները գալարուին և զիւրաբեկ դառնան: Եթէ բերքին չորացման համար օգը յարմար ըլլայ, պեղումէն մէկ կամ երկու ժամ ետքը, կարելի է սկսիլ զանոնք գէղի վերածելու:



Պատկեր 10. — Գեհնապիսակ ֆաղելու ուրիշ տեսք մը :

Գ Ի Ջ Ո Ւ Մ Ը

Գեհնապիսակները չորցնելու լաւագոյն միջոցն է զանաւոր ձողերու շուրջ փոքր դէղերու վերածել : Այս ձողերու վրայ գեհնին երեսէն 5—10 սանթիմէթր վեր երկու խաչափայտեր պէտք է քամ-



Պատկեր 11. — Գեհնապիսակի ֆաղին համար գործածուող փաթաթեա ֆաղող մեքենան :


ուին : Յատակի վրայ 7—10 սանթիմէթր տրամագիծ ունեցող, 2 մէթր երկար և երկու ծայրերը սրածայր փոքր ձողերը լաւագոյններն են գեհնապիսակները դէզի վերածելու : Ձողին խաչածեղ մասերը պէտք է ըլլան 35—45 սանթիմէթր երկայն և եզերուած շերտերով : Մէկ Ամերիկեան լծվար գեհնապիսակի տարածութեան համար 15—30 դէզի ձողի պէտք կայ : Այս ձողերն ու խաչածեղ կտորները, քաղի թուականէն առաջ, պէտք է պատրաստուին : Իւրաքանչիւր ձողին համար, երկու խաչածեղ կտորի պէտք կայ :



Պատկեր 12. — Փաթաթեա ֆաղող մեքենան՝ գեհնապիսակ ֆաղելու ժամանակ

Ասոնք ձողին վրայ, մէկը միւսին վրայ, ուղղանկիւնածեղ պէտք է քամուին : (Պատկեր 13) : 10—12 գեհնապիսակի շարքեր՝ դէզի կարգ մը կը կազմեն : Բաւականաչափ շարքեր փորուելէ ետքը, դէզերը կը բաժնուին, ծակերը կը փորուին, ձողերը ասոնց մէջ տմրապէս կը հաստատուին և խաչածեղ փայտերն ալ, գեհնին երեսէն 20—30 սանթիմէթր և իրարու ուղղանկիւնածեղ կը քամուին : Այս ձողերը այնպէս մը ամուր հաստատուելու են որ չի կքին դէզերու ծանրութեանը տակ : Գեհնապիսակի ցօղունները դէզի ձողերուն շուրջը հաւաքելու համար վեցծանի կամ ութծանի հասկաքաղի մը պէտք կայ : Նախ ցօղունները քովէ քով բերուելով, գեհնին վրայ շրջանակածեղ կը ձգուին, արմատները դէպի ձող և անկէ յարմար հեռուորութեամբ : Այս կերպով դէզը շինող մարդուն գործը զիւրացուած կ'ըլլայ : Իւրաքանչիւր խաչածեղ փայտին վրա-

յէն ցօղուններ կախելով, դէզին հիմը կը կազմուի: Յետոյ ցօղունները ձեռքով կուտակելով, դէպ ի վար ձնչելով և բոլոր պիտտակները ձողին քով դէպ ի ներս պահելով, դէզը կը շինուի: (Պատկեր 14): Յատկապէս փունջ մը պէտք է բաժնուի և ձողին շուրջը կախուի, որպէսզի այս կերպով դէզը իրարու կապուի և դէզին կեդրոնը դուրսի մասէն 30 սանթիմէթը աւելի բարձր պահուի՝ անձրեւի ջուրերը վաղցնելու համար: Երբ ցօղունները արտաքոյ կարգի երկայն ըլլան, դէզին կեդրոնը պէտք է բարձր ըլլայ յատակի մա-



Պատկեր 13. — Դեհնապիսակի դէզ շինելու յատուկ ձողեր:

սէն: Օգին ազատ շրջաբերութիւնը դիւրացնելու և պիտտակներուն տաքնալու և թթուելու հաւանականութեան առաջըը առնելու համար, ու և է պարագայի տակ դէզերուն տրամագիծը 90—105 սանթիմէթը անցնելու է: Դէզերը ամբողջանալու տոհն, մի քանի ցօղուններ խաչածեւ դէպի վար կախելով, գագաթին աստիճանաբար սրածայր ձեւ մը տալու է: Էն վերջը դէզին գագաթին վրայ մաս մը չոր խոտ դնելով ծածկելու է, բայց այնպիսի ուղղութիւն մը պիտի ունենայ որ որպէսզի օգին շրջաբերութիւնը չարգիլուի և պիտտակներուն չորացումը չի խաթարուի: (Պատկեր 15): Այս կերպով պիտտակները, որոնք ծախու պիտի հանուին, առ նուազն վեց շաբաթ կը չորցուին դէզերուն վրայ և յետոյ կը հաւաքուին: Պիտտակները չի չորցած աճապարելու է հաւաքելու, այլապէս կանուխ հաւաքուելէ ետքը գալարուելով բորբոսելու կամ խմորուելու վտանգին կ'ենթարկուին: Այն տեղեր ուր պիտտակներն և

իրենց ցօղունները անասունները կերակրելու կը ծառայեն, շտեմարանները ամբարուելէ առաջ, գոնէ 2—4 շաբաթ դէզերու վրայ չորցուելու են:

Վերին եգիպտոսի մէջ ցանքէն ետքը, 7—7ուկէս ամսուան ընթացքին, գետնապիտտակները կը սկսին դեղնիլ, ինչ որ կը ցուցնէ թէ՛ պիտտակները հասած են: Սեպտեմբերէն նոյեմբեր քաղը կը շարունակուի: Ցօղունները դիւրաւ քակելու համար, տեղեր կան ուր արտերը նախապէս կը ջրեն և տեղեր ալ կան ուր թեթեւօրէն




Պատկեր 14. — Մասամբ ամբողջացուած դեհնապիսակի դէզեր, որոնք կը ցուցնեն ցօղուններուն դիզումի մեքոսը:

Ամբողջացած դէզեր քիչ մը անդին կ'երեւին:

կը հերկեն: Ցօղունները քակուելէ ետքը, չորնալու համար մի քանի օր արեւին տակ կը ձգուին և յետոյ պիտտակները կը հաւաքուին: Ցօղունները որքան ալ խնամքով քակուած ըլլան, հողին մէջ նորէն կը մնան պիտտակներ, որոնք բանուորուհիներու հաւաքուիլ կուլ կը մնան պիտտակներ, որոնք բանուորուհիներու հաւաքուիլ կուլ տան՝ մէկ արեւի (198 լիտր) պիտտակին մէկ քիլո (16.50 լիտր) վճարուելու պայմանաւ: Վարին եգիպտոսի մէջ ալ Հոկտեմբեր և Նոյեմբեր քաղի ամիսներն են: Հոս գետնապիտտակին աճման շրջանը մօտ ութը ամիս է: Քաղի ժամանակ հողը թեթեւօրէն կը ջրուի և բոյսերը ձեռքով կամ մարկեղով մը կը քակուին: Քակ-ընուած բոյսերը գետնին վրայ լիւրի վայր կը դրուին և չորնալու համար մի քանի օր այդպէս կը ձգուին: Յետոյ պիտտակի արտը

ամբողջովին կը պեղուի և հողին մէջ ֆաշաճ պիտտակները կը հաւաքուին։ Հողին մէջէն հաւաքուած պիտտակները հնաացուի շատ յարմար կը նկատուին և այդ նպատակին համար մեծաքանակ կը պահուին։ Բոյսերը չորնալէ ետքը, պիտտակները բուժ գանակով մը կը զատուին և մօտ 20 օր արեւին տակ կը չորցուին։ Չորացումի իւրաքանչիւր օր, անոնք վեր վար կը շրջուին, որմէ յետոյ, տերեւներէ և հողէ զատուելու համար, կը հոսուին։ Ինչպէս կը տեսնուի, Եգիպտոսի մէջ գետնապիտտակի ցօղունները, Մ. Նահանգներ եղածին նման, գէղերու վերածելով չորցնելու գրութիւնը գոյութիւն չունի։



Պատկեր 15. — Գետնապիտտակի սիպար դեպ մը։

Ժ Ո Ղ Վ Ե Լ Ը Ե Ի Մ Ա Ք Ի Ե Լ Ը

Առեւտրական պիտտակի բերքը Մ. Նահանգներու մէջ գլխաւորաբար Հոկտեմբեր, Նոյեմբեր և Դեկտեմբեր ամիսներու մէջ կը ժողվեն։ Գետնապիտտակները լաւ կերպով կրնան հաւաքուիլ, երբ որ ցօղունները չոր և զիւրաբեկ են։ Խոնաւ օդը կը կարծրացնէ ցօղունները և հետեւաբար կը դժուարացնէ պատիճներուն անջա-

տումը։ Եթէ ունի պատճառով հարկեցուցիչ դառնայ գետնապիտտակները թաց վիճակի մէջ կամ լիապէս չորնալէ առաջ հաւաքել, զանոնք մեծաքանակ ամբարեւու չէ, այլ տախտակամածի մը վրայ բարակ կերպով տարածելու և մինչեւ որ չորնան ժամանակ ժամանակ խառնելու է զանոնք։ Մեծաքանակ թաց թաց ամբարեւուած կամ պարկուած գետնապիտտակները կը թթուոտին և թէ՛ չուկայի և թէ՛ հնաացուի անյարմար կը դառնան։


Նախապէս Մ. Նահանգներու մէջ գետնապիտտակները իրենց



Պատկեր 16. — Գետնապիտտակները ցօղուններուն վրայէն ձեռքով հաւաքելու եին մեքոսը։

ցօղուններուն վրայէն ձեռքով կը հաւաքուին։ (Պատկեր 16)։ Հիմա այս զործողութիւնը կը կատարեն մեքենայով։ Այս մեքենաներն ալ երկու տեսակ են։ Մէկը զլանով է, միւսն ալ մետաղաթելեայ օղակով։ Այս մեքենաներուն մէջ կտրտուած պատիճները շատ քիչ են։ Այս մեքենաներով օրը միջին հաշուով 250 ամերիկեան գրիւն գետնապիտտակ կը հաւաքուի։ Այս մեքենաները ոչ միայն պատիճները իրենց ցօղուններուն վրայէն կը հաւաքեն, այլ նաեւ կը մաքրեն զանոնք և փոքր ճիւղի կտորներն ալ մէկգի կը նետեն։ (Պատկեր 17)։ Դէղերուն հետեւ տեղեր փոխադրութենէն կորսուելիք ժամանակը շահելու համար, ժողովող մեքենան գաշտին կեդրոնին մօտ յարմար տեղ մը կը գրուի։ Եթէ դաշաճ շատ ընդարձակ ըլլայ, այն ժամանակ մեքենան երկու երեք անգամ կրնայ տեղափոխուիլ։

Դէպերը իրենց ձողերովը միասին պէտք է փոխադրուին մեքենային մօտ : Եթէ ձողերը իրենց տեղերը ձգուելով միայն ցօղունները փոխադրուին, գետնապիտտակի կորուստ յառաջ կուգայ, Զողերը՝ իրենց խաչածէ կտորներուն տակ լծակներ գրուելով, գիւրին կըրնան հանուել գետինէն : Այն ժամանակ կտքերով կը փոխադրուին և մեքենային քով պարպուած ատեն ձողերը քաշուելով մէկդի կը գրուին : Գետնապիտտակի ընդարձակ մշակութիւն կատարուող տեղեր, գէղերուն քաղհան մեքենային մօտ փոխադրութեան համար




Պատկեր 17. — Գետնապիտտակ հաւաքող մեքենայ :

մասնաւոր երկանիւ կտքեր կը դորձածուին : (Պատկեր 18) : Թէ՛ քանակով և թէ՛ օրակով լաւ արդիւնք մը ձեռք ձգելու համար, քաղհան մեքենան ծանր և միօրինակ աշխատելու է : Եթէ ցօղունները թաց կամ արտաքոյ կարգի չօր ըլլան, մեքենան այդ պայմաններուն համեմատ յարգարելու է : Մեքենան աշխատցնելու համար 4—5 մարդ պէտք է : Մէկը փոքր երկժանիով մեքենային տախտակին վրայ գետնապիտտակի ցօղունները կը գետեղէ, երկրորդ մը՝ ձեռքով մեքենային կուտայ զանոնք, երրորդ մը մեքենային ելած գետնապիտտակները կը հաւաքէ, չորրորդ մը չօր խօտը մէկդի կը նետէ, իսկ հինգերորդն ալ մեքենան կ'իւղղօտէ և կը մաքրէ :

Գետնապիտտակի քաղհան մեքենաներուն մեծագոյն մասը ունի նաեւ պարկուտի յաւելուածական մաս մը, որով մեքենային եւնող գետնապիտտակները ուղղակի մասնաւոր պարկերու մէջ կը լեցուին : Գետնապիտտակի պարկերը 80×90 սանթիմէթր չափը ունին և մօտաւորապէս 120 ամերիկեան գրիւ Սպանիական գետնապիտտակ կը պարունակեն : Պարկերը լեցուելուն պէս, մեքենային գուրո կը քաշուին և բերանին կը կապուին : Յետոյ այս պարկերը ամբարանոց կը փոխադրուին : Այսպէս հոտ հաւաքուած գետնապիտտակները շատ անգամ քիչ թէ շատ խոնաւութիւն պարունա-

կելնուն համար, ամբարանոցի մէջ այնպէս մը գրուելու են որ, օղը ազատօրէն շրջաբերի : Ամբարանոցները լաւ ձեղունով մը օժտուած և պարկերը անձրեւէն լաւ մը պաշտպանուած ըլլալու են : Պարկերը ուղղակի տախտակամածին կամ գետնին վրայ շարուելու չեն, այլ անոնց տակը ձողեր գրուելու են, որպէսզի հովհարուած թիւնը ապահովուի : Մուկերը խենթ սիրահարներ ըլլալով գետնապիտտակին, շտեմարանները անոնց դէմ պահպանելու համար խիստ միջոցներուն գիմելու է :



Պատկեր 18. — Գետնապիտտակի դեղեր՝ փաղհան մեքենային փոխադրող երկանիւ կառք :

Երբեմն գետնապիտտակները՝ քաղհան մեքենային ուղղակի հրապարակ կը հանուին : Բայց շատ անգամ անոնք աւելի կամ պակաս կարմրեկ ըլլալուն և ցօղունի կտորտուքներ, թեթեւ պատիճներ, արմատներ, աւաղ և փոքր քարեր բովանդակելուն համար, մաքրուելէ յետոյ ծախու հանուելու են : Ասոր համար անոնք կրկին քաղհան մեքենային մէջէն կ'անցուին՝ զօրաւոր օղային հոկրկին քաղհան մեքենային մէջ կը գրուին : Իւրաքանչիւր պարկ կը կրկին նոր պարկերու մէջ կը գրուին : Իւրաքանչիւր պարկ կը կշուուի և կշիւքն ու աստիճանը պարկին վրայ կը նշանակուի : Այս կշուուի և կշիւքն ու աստիճանը պարկին վրայ կը նշանակուի : Կերպով գետնապիտտակները պատրաստ կ'ըլլան վաճառումի համար :

ԳԵՏՆԱՊԻՏՏԱԿՆԵՐՈՒ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Մ. Նահանգներու Հարաւային Նահանգներու մէջ գետնապիտտակներու տիպար աստիճաններ ընդունուած են, հիմնուելով վերջըլած նմուշներէն փեճեկուած առաջին կարգի միջուկներուն առհարիւր քանակին վրայ : 1919ին, Հարաւային Նահանգներու Գե-

նապիտակ ձմրողներու Բնկերութիւնը, գետնապիտակները դասաւորելու համար հետեւեալ կանոնները ընդունած է :

Հասուած 1. — Չորս ընդհանուր կարգեր պիտի ըլլան, «Հուայթ Սպանիշ», «Պընչ», «Ռընըրս» և «Միքսըտ» անուններով : Այս չորս կարգերէն իւրաքանչիւրը երեք աստիճան պիտի ունենայ, թիւ 1, թիւ 2 և թիւ 3 անուններով :

Հասուած 2. — Այդ աստիճանները պիտի հիմնուին անվթար և հասունցած միջուկներու առ հարիւր սակին վրայ հետեւեալ կերպով :

Թիւ 1 : Պիտի բովանդակէ առնուազն հարիւրին 70 անվթար և հասած միջուկներ և առաւաւելն հարիւրին 3 ինասուած :

Թիւ 2 : Պիտի բովանդակէ հարիւրին 65—70 անվթար և հասած միջուկներ և առաւաւելն հարիւրին 3 ինասուած :

Թիւ 3 : Պիտի բովանդակէ հարիւրին 60—65 անվթար և հասած միջուկներ և առաւաւելն հարիւրին 3 ինասուած :

Հասուած 3. — հետեւալ պարագաներու մէջ գտնուողները պիտի նկատուին աստիճանէ դուրս և պիտի ծախուին նմոյշի համեմատ :

Ա. — Հարիւրին 7 է աւելի խոնաւութիւն :

Բ. — Հարիւրին 5 է աւելի սեւ կամ բորբոսած կճեպներ :

Գ. — Հարիւրին 60 է պակաս անվթար միջուկներ և հարիւրին 3 է աւելի ինասուածներ :

Դ. — Կարմիր գետնապիտակներու ունէ խառնուրդ :

Ե. — Հարիւրին 2 է աւելի ուրիշ տեսակներու խառնուրդ :

Զ. — Հարիւրին 2 է աւելի կճեպուած նուշեր :

Հասուած 4. — Խառնուրդ (միքսըտ) գետնապիտակները կը պարունակեն .

Ա. — Ուրիշ տեսակներու ունէ խառնուրդ :

Բ. — Հարիւրին 2 է աւելի փեճեկուած նուշեր բովանդակող տեսակներ :

Հասուած 5. — «Անվթար միջուկ» կը նկատուին փայլուն, հասունցած և ընթացիկ միջուկները :

«Վնասուած միջուկ» կը նկատուին անոնք որոնք լաւ համ չունին կամ թթու, կակուղ և կծու են և կամ ամբողջովին կամ մասամբ տարբադարուած են :

«Փեճեկուած միջուկ» կը նկատուին բոլոր անոնք որ փեճեկուած են և կը բովանդակեն ամբողջ կամ կտրած միջուկներ :

Հասուած 6. — Կշիռքով առ հարիւրերորդ մասերը պիտի հիմնուին ագարակատէրներու մթերքներուն նմոյշներուն վրայ՝ ձեռքով փեճեկուած :

Հասուած 7. — Յանձնումի գինով զեղչ պիտի կատարուի հարիւրէն մէկէ աւելի բոլոր օտար նիւթերու և հարիւրին եօթնէ աւելի խոնաւութեան համար :

Հասուած 8. — Իւրաքանչիւր սայլի զանազան մասերէն առնուած և իւրաքանչիւր 5 ամերիկեան քաշ կշռող վեց նմոյշներ, և վախճանէ մը առնուած և իւրաքանչիւրը 2 ամերիկեան քաշ կշռող երկու նմոյշներ լաւ նմոյշ մը կը կազմեն : Այս նմոյշները լաւ մը իրար կը խառնուին, չորսի կը բաժնուին և ձեռքով փեճեկուած 100 կրամը՝ իրենց աստիճանը որոշելու համար հիմ կը ծառայէ : (Տես պատկեր 19, 20, 21, 22, 23 և 24) :




Պատկեր 19. — Վիրճինիական տիպի գեճապիտակ : Ձախ կողմինը կը ներկայացնէ լաւ հաւաքուած բերք մը, իսկ աջ կողմինը՝ գեճ հաւաքուած :

Կ Շ Ի Ռ Ո Վ, Ա Ռ Ո Ի Ծ Ա Խ

Լաւագոյն է որ գետնապիտակները ծախուին ներկայ կշիռով քան ամերիկեան գրիւով (պուշը) : Գետնապիտակներու առուծախին մէջ ամերիկեան գրիւի գործածութեամբ, ահագին սխալներ յառաջ կուգան : Խոշոր պատիճաւոր տեսակներուն ամերիկեան գրիւը, ըստ օրինի, 22 ամերիկեան քաշ (փառնտ) և Սպանիականներունը 28—30 ամերիկեան քաշ կշռելու է : Բայց այս կշիռները հաստատուն չեն և տեղւոյն, աստիճանին և մթերքի պայ-

մանին համեմատ կը փոխուին: Բայց վախճանի կամ կենդանարի հիման վրայ և տիպար աստիճաններու համեմատ կատարուած առուծախները, թէ՛ գնորդին և թէ՛ վաճառողին համար, որոշ առեւտուր մը կը կազմեն:



Պատկեր 20. — Սպանիական գեսնապիսակ: Չախ կողմինը կը ներկայացնէ լաւ հաւաքուած բերք մը, իսկ աջ կողմինը գեռ հաւաքուած:


ԳԵՏՆԱՊԻՍԱԿԻ ՇՈՒԿԱՆԵՐ

Փոքրաքանակ առուտուրի համար գետնապիստակի և իր արտադրութիւններուն պատրաստութեան մէջ գետնապիստակ մաքրող գործարանները և իւղարանները կարեւոր են: Գետնապիստակներուն բազմաթիւ և զանազան գործածութիւնները, սուղ և կնճռոտ մեքենաներու կարօտ ըլլալուն համար, այս գործը նպաստաւոր կերպով կարելի է կատարել ազարակին մէջ: Ասոր համար, երբ ազարակատէրը, լաւագոյն կարելի պայմաններով, մաքրած և աստիճանաւորած է իր բերքը և զայն յանձնած է նաւահանգիստ կամ գործարան, այս կերպով իր գործը վերջացած կ'ըլլայ:

ԳԵՏՆԱՊԻՍԱԿՆԵՐՈՒՆ ԱՐԺԷՔԸ

Գետնապիստակը՝ իբրեւ շահաւէտ բերք նկատուած է Մ. Նահանգներու այն հարաւային նահանգներուն համար, ուր հողին յատկութիւնը, կլիման և տեղական պայմանները յարմարած են իր

արտադրութեան: Նոր նոր գործածութիւններ և շուկաներ, գետնապիստակի խնդրանքը բազմապատկած են: Խելացի մշակ մը պարտի գետնապիստակի մշակութեան բոլոր ծախքերը, սկիզբէն մինչեւ վերջը, զատ զատ և մանրամասն բռնել, որպէսզի իր բերքին իրական շահը կարենայ գիտնալ: Եթէ ամերիկեան լծվարի մը մշակական բոլոր ծախքերը գիտցուն, այն ատեն ամբողջ բերքին ծախքը հաշուել կը դիւրանայ: Այս ծախքերը հոս մասնաւոր ցանկի մը մէջ պատկերել սխալ կ'ըլլայ: Զազազան երկիրներու և նահանգներու տեղական պայմանները, այս մշակական ծախքերու մէջ մեծ դեր կը խաղան:




Պատկեր 21. — Գեսնապիսակի գսիչ մեքենայ:

ԳԵՏՆԱՊԻՍԱԿԻ ՀԱՍՈՅԹԸ ԵՒ ԳԻՆԸ

Մ. Նահանգներու մէջ գետնապիստակի միջին հասոյթը, տեսակին համեմատ, ամերիկեան լծվար գլուխ, մօտաւորապէս 36 ամերիկեան գրիւ (800—1100 ամերիկեան քաշ) է: Վերջին 10 տարիներու ընթացքին մէջ, ամերիկեան լծվար գլուխ բերքը 2—4 ամերիկեան գրիւ աւելցած է: Ամերիկեան լծվար գլուխ բերքը, տեղւոյն և մշակին փորձառութեան համեմատ մեծապէս կը փոխուի, բայց տեսակին համեմատ 40—50 ամերիկեան գրիւ (900—1500 ամերիկեան քաշ) լաւ բերք մը կը նկատուի: Մինչեւ 1800—2000 ամերիկեան քաշ հիւսնալի բերքեր ձեռք ձգուած են:

Գետնապիստակի ամերիկեան լծվար գլուխ որոշ արժէքը տար-
ուէ տարի կը փոխուի: Եթէ բերքը ու աստիճանը ծանօթ են,
թէ՛ գետնապիստակին, թէ՛ չոր խոտին և թէ՛ իր աւելցուք արտա-
դրութիւններուն համար նպաստաւոր գիծեր գտնել շատ զիւրին է:
Մշակական ծախքերը զեղչելով, զուտ շահերը կը ստացունին:


Վերին Եգիպտոսի Ասիութ և Կիրկա նահանգներուն մէջ մէկ



Պատկեր 23. — Վիրնիցիա սիւլի փեմեկաւոր գետնապիստակի
երեք մասիւններ:

Եգիպտական լծվարը (Ֆէտտան) 10—15 եգիպտական գրիւ (արտէպ)
գետնապիստակ կուտայ (54ուկէսէն 82 ամերիկեան գրիւ): Մէկ
եգիպտական գրիւը 75 քիլոկրամ է: Այդ նահանգներու մէջ գե-
տնապիստակի չոր խոտը այնքան յարգի է: Ֆայումի մէջ մէկ
եգիպտական լծվարը 9—10 եգիպտական գրիւ (49 էն 54ուկէս ամե-
րիկեան գրիւ) կուտայ, եգիպտական գրիւը ըլլալով 75 քիլոկրամ
և բաժնուած 13 ֆլիէյի: Մէկ եգիպտական գրիւը 5.44 ամերիկեան

գրիւ ըլլալով, ասկէ կը հետեւի թէ՛ չփեմեկուած գետնապիստակի
կշիւը մօտաւորապէս 30 ու կէս ամերիկեան քաշ է: Ֆայումի մէջ




Պատկեր 23. — Վիրնիցիա սիւլի անփեմեկ գետնապիստակի
երեք մասիւններ:

գետնապիստակի խոտը, թէ՛ իր կանանչ և թէ՛ իր չոր վիճակին
մէջ, անատուններու կը տրուի: Այս խոտը կը պատկանի գետնա-
պիստակ հաւաքող գործաւորներու: Եգիպտական լծվարէ մը երկու
ուղտի բեռ (հեմլ) խոտ կ'արտագրուի, իւրաքանչիւր բեռը 20
եգիպտական դահեկան արժէքով: (100 եգիպտական դահեկանը մէկ
անգլ. ոսկիէն աւելի կ'արժէ):

Վարին Եգիպտոսի Շարֆիա նահանգին մէջ, տեղեր կան ուր
գետնապիստակ և չուշմայ միասին կը ցանեն նոյն հողամասին
վրայ: Նման պարագայի մը տակ, մէկ եգիպտական լծվարը վեց

եգիպտական գրիւ գետնապիտտակ և երկու եգիպտական գրիւ շուշմայ կուտայ: Շարքիա նահանգին մէջ գետնապիտտակը առանձին, եգիպտական լծվար գրիւ 10—20 եգիպտական գրիւ (54 ու կէսէն 109 ամերիկեան գրիւ) բերք կուտայ: Մինչեւ 30 եգիպտա-



Պատկեր 24. — Սպանիական անպիեհեկ գետնապիտտակի երկու ասիւնանքներ:

կան գրիւ (2250 քիլոկրամ կամ 163 ուկէս ամերիկեան գրիւ) բերք ստացուած է: Վարին եգիպտոսի Քալուպիա նահանգին մէջ բնականոն միջին բերքը 10 եգիպտական գրիւ է (54 ու կէս ամերիկեան գրիւ) և Պեհեռա նահանգին մէջ ալ 8—10 եգիպտական գրիւ (43 ու կէսէն 54 ու կէս ամերիկեան գրիւ): Խոտի քանակը, եգիպտական

լծվար գրիւ 3 ուղտի բեռ ըլլալով, անասուններուն կը տրուի: Մէկ եգիպտական լծվար խոտը 40—60 եգիպտական դահեկան կ'արժէ: Այս խոտով ընդհանրապէս ոչխարները և ուղտերը կը կերակրուին: Զանազան երկիրներու գետնապիտտակի արտադրութիւնը, ները իրարու հետ բաղդատուելով, տեսնուած է որ եգիպտոսի մէջ, ուրիշ երկիրներէ աւելի մեծաքանակ բերք ձեռք ձգել կարելի է աղբերու գործածութեամբ: Եգիպտական լծվար մը առատօրէն աղբուելով մինչեւ 2250 քիլոկրամ բերք տուած է:

Սենեկալի մէջ լաւ հողերու մէկ հէքթարը (10,000 քառակուսի մէթր) միջին հաշուով 1500—1800 քիլոկրամ գետնապիտտակ կ'արտադրէ: Մինչեւ 2450—2700 քիլոկրամ բերք ստացուած է:

Հնդկաստանի մէջ լաւ հողերը, միջին հաշուով, ամերիկեան լծվար գրիւ 3200—3500 լիտր չփեճեկուած գետնապիտտակ կ'ուտան: Հնդկաստանի մէջ չփեճեկուած և փեճեկուած գետնապիտտակներու միջին համեմատութիւնը չորսի զեւ երեք է: Հնդկական գետնապիտտակները փեճեկուած վիճակի մէջ կ'արտածուին:

Գ Ե Տ Ն Ա Պ Ի Ս Տ Ա Կ Ը

ԵՒ ԻՐ ՅԱՐԱԿԻՅ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՂ ԻՐ ԿԵՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ

Միացեալ Նահանգներու հարաւային մասին ագարակային բերքերու մէջ, գետնապիտտակը ունի բացառիկ դերք մը: Իր բոլոր մասերը, ինչպէս նաեւ գործարանէ ելած իր յարակից բոլոր արտադրութիւնները, անասուններու համար սքանչելի կեր կը կազմեն: Այս նպատակին համար գործածուած գետնապիտտակի ագարակային և գործարանային արտադրութիւնները հետեւեալներն են: Գետնապիտտակի խոտ, թեթեւ կամ ստորին պատիճներ, կեղեւներ, ճմլարանով տակի խոտ, թեթեւ կամ ստորին պատիճներ իւզի պատրաստութեամբ (cake), գետնապիտտակի իւզի պատրաստութեամբ (meal), կծկուած և ստորին միջուկներ, սերմեր, նէն գոյացած մայծ (meal), կծկուած և ստորին միջուկներ և քաղցրաւենի մսեղէն բարակ մասեր և գետնապիտտակի կարագի և քաղցրաւենի պատրաստութիւններէն յառաջ եկած սերմեր, կարմիր մաշկեր և մսեղէն ստորին մասեր:

ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԻ ԽՈՏ

Երեք տեսակ գետնապիտտակի խոտ կայ:

Ա. — Գետնապիտտակի հնձուած խոտ: — Երբեմն գետնապիտտակի հողէն դուրս խոտեղէն մասը հնձող մեքենայով մը հնձուելով, միւս խորերու նման չոր խոտ կը պատրաստուի:

Բ. — Գետնապիտտակի խոտ՝ պիտակովը միասին: — Գետնապիտտակի տունկը հողէն քաշուելով իր պիտակներովը միասին խոտ կը պատրաստուի: Այս կերպով կը գոյանայ հարուստ խոտ մը,

որ կը բովանդակէ պիտտակներ, արմատներ և ճիւղեր: Ասիկա, արմատներ ունենալով կը տարբերի միւս չոր խոտերէն: Քաղի ժամանակ եթէ խնամք չի տարուի, իր պարունակելիք ազտեղութիւնը կրնայ փխտել անասուններու:

Գ. — Գեանապիտակի խոտ՝ առանց պիտակի: — Գեանապիտակի ճիւղերը կը քաշուին և պիտտակները կը քաղուին: Այս կերպով գոյացած խոտը, որ կը պարունակէ մի մաս արմատ և մի քանի պիտտակներ, հակի կը վերածուի: Թէեւ ասիկա ծագումով յարգ մը կրնայ նկատուիլ, բայց շատ աւելի բարձր կեր մըն է: Կամուռած ժամանակ, խոտէն փոշին և ազտը զատելու համար խնամք պիտի տարուի: Ազտը փխտակար է անասուններուն համար և խոտին արժէքը կը կտրէ:

Գեանապիտակի խոտը շատ կը գործածուի Մ. Նահանգներու մէջ: Արժէքաւոր խոտ մըն է, նոյն իսկ աւելի արժէքաւոր քան առաջին կարգի առուոյտի կամ երեքնուկի խոտը: Երբ ճիւղերն ու տերեւները իրենց բուններուն վրայ խնամքով չորցուն, ստացուած խոտը կ'ըլլայ մաքուր և արժէքաւոր: Ներկայիս շինուած են այնպիսի քաղող մեքենաներ, որոնք կը զատեն միեւնոյն ժամանակ հողին և աւաղին մեծազոյն մասը, ինչ որ կ'աւելցնէ խոտին արժէքը: Կան քաղող մեքենաներ, որոնք միեւնոյն ժամանակ թէ՛ կը քաղեն և թէ՛ խոտը հակի կը վերածեն: Շատ անգամ ալ քաղող մեքենային կը հետեւի ուրիշ մեքենայ մը, որ քաղուած խոտերը կը վերածէ հակի: Հակերը որպէսզի միօրինակ ըլլան, տերեւներն ու ճիւղերը իրարու լաւ մը խառնուելու են: Գեանապիտակի խոտը հակի կը վերածուի, երբ չոր ըլլայ և հակերը կ'ամբարուին, երբ անոնք օգին ազդեցութեան պիտի չենթարկուին:

ԽՈՏԻՆ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՆՆԳԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Մեր վերը նկարագրած երեք տեսակ գեանապիտակի խոտերը հետեւեալ բաղադրութիւնները ունին.

Գեանապիտակի հնձուած խոտը ունի հարիւրին 7,10 մարսելի պրօթէին (ազօթային նիւթ) և 10,9 արտադրական արժէք: Պիտտակախառն գեանապիտակի խոտը ունի հարիւրին 10 մարսելի պրօթէին և 15,6 արտադրական արժէք և առանց պիտտակի գեանապիտակի խոտը ունի հարիւրին 6,11 մարսելի պրօթէին և 10,6 արտադրական արժէք: Ասոնց փոխարէն, առուոյտի խոտը ունի հարիւրին 11 մարսելի պրօթէին և 8,7 արտադրական արժէք: Գեանապիտակի խոտերուն մէջ գտնուած մարսելի ազօթանիւթը (protein) և արտադրական արժէքները, որոշապէս կը ցուցնեն անոնց սննդական արժէքը: Մարսելի ազօթանիւթը աճման տարիքին մէջ գտնուող անասուններուն և կաթնուտ կովերուն համար, գիրա-

ցումի կամ աշխատանքի ենթակայ անասուններէ աւելի կարեւոր է: Որովհետեւ աճող անասունները միս և կովերը կաթ արտադրելու համար ազօթանիւթի պէտք ունին: Միւս կողմէ ամէն կարգի անասունները տաքութիւն, կորով, ճարպ կամ կաթ արտադրելու համար, պէտք ունին արտադրական արժէքի, այսինքն ճարպային նիւթերու: Առանց պիտտակի գեանապիտակի խոտը, աւելի շատ արտադրական արժէք ունի քան առուոյտի խոտը, թէեւ քիչ մարսելի ազօթանիւթ կը պարունակէ: Այս խոտը գրեթէ ուրիշ ու է խոտէ աւելի բարձր արտադրական արժէք ունի: Այս կը ցուցնէ թէ՛ առանց պիտտակի գեանապիտակի խոտը սննդական բարձր արժէք մը ունի: Գեանապիտակի խոտը յարմար կեր մըն է արջառներու, ոչխարներու և ձիերու համար: Պիտտակախառն գեանապիտակի խոտը շատ իւղ կամ ճարպ կը պարունակէ, այնպէս որ եթէ մեծաքանակ տրուի անասուններուն, ախորժակին կը գոցէ կամ անմարսողութիւն յառաջ կը բերէ: Ասկէ օրական իւրաքանչիւր անասունի 8—9 ամերիկեան քաշէ աւելի տալու չէ և ուրիշ կերերով ամբողջացնելու է իր օրական կերակուրը:

Մըլտած գեանապիտակները անյարմար են անասունները կերակրելու, բայց խնամքով պատրաստուած գեանապիտակի խոտը ամէն տեսակ անասունի կրնայ տրուիլ: Այս խոտը ձիերուն և ջուրինեան տրուած ատեն, մետաղաթելէ յատկով մսուրներու մէջ տալու է, որպէսզի աւաղներն ու փոշիները կարենան զատուիլ: Մըլտ կամ չափազանց փոշիոտ գեանապիտակով կերակրուած ձիերուն կամ ջորիներուն մօտ խիթերը անպակաս են:

Թեթեւ կամ սոսորին պատիճները խոզերը կերակրելու կը ծառայէ: Կամ անոնք ազացուելով ուրիշ նիւթերու հետ կը խառնուին և կովերու, հաւերու կամ խոզերու կը տրուին:

Գեանապիտակի կեղեւները հարիւրին 6—8 ազօթանիւթ և մինչև 2—3 ճարպային նիւթեր կը պարունակեն: Ասոնց մէջ հում նեարդը առատօրէն կը գտնուի (մինչև 60—70):

ԽԻՒՍԱԿ ԵՒ ՄԱՅՏ

Գեանապիտակի իւղի ճարտարարուեստը գտնուած տեղեր, այս գործարաններէ գոյացող խիւսակը և մայծը շատ կարեւոր են: Այս երկու արտադրութիւններուն մէջ, ազօթանիւթը և ճարպային նիւթերը միացած՝ հարիւրին 55 սակ մը կը ներկայացնեն, համապատասխան բամպակի կուտին ազնիւ մայծին: Գերմանական տարպատասխան բամպակի կուտին (analyse) համեմատ, գեանապիտակի խիւսակը բաւուժումներուն (analyse) համեմատ, հարիւրին 48—49, հարիւրին 44—50, անգլիականներուն համեմատ՝ հարիւրին 48 և ամերիկեաններուն ֆրանսականներուն համեմատ՝ հարիւրին 48 և ամերիկեաններուն

համեմատ 44—49 ազօթանիւթ կը պարունակէ։ Միացեալ Նահանգներու մէջ, երբ բամպակի կուտի մայծին տակառաջափը (ton) 55 տոնլար արժէ, գետնապիստակի ազնիւ մայծին տակառաջափը 65 տոնլար կ'արժէ։ Գետնապիստակի մայծով կերակրուած կաթնտու անասուններուն կաթերը, բամպակի կուտի մայծէն եղածին հա-կառակ, ու է մասնաւոր համ կամ հոս չեն ունենար։ Այս մայծով կրնան շարունակաբար կերակրուիլ նաեւ խոզերը, բամպակի կուտի մայծէն եղածին հակառակ, առանց ու է փնասակար արդիւնք առաջ բերելու։ Կենսական պիտանիքէ պատրաստուած գետնապիստակի մայծը, կենսականութենէն աւելի նախընտրելի է խոզերու կերակրումին համար։ Գետնապիստակի մայծը մեծաքանակ ազօթանիւթ պարունակելուն համար, լաւագոյն է զայն ուրիշ կերերու հետ խառն տալ անասուններուն։

ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԻ ՆՈՒՇԵՐՈՒՆ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մ. Նահանգներէն Թէքսաս նահանգի երկրագործական փորձառակալի կայանին մէջ կատարուած բազմաթիւ տարրալուծումներ կը ցուցնեն թէ՛ գետնապիստակի նուշերը կը պարունակեն հարիւրին 28—35 ազօթանիւթ և հարիւրին 47—51 ճարպային նիւթեր։ Միջին հաշուով ազօթանիւթի հարիւրերորդ սակն է 29,45 և ճարպային նիւթերունը 48,89։ Գետնապիստակի տեսակներէն Վիրճինիա Ռենըր հարիւրին 29,60 ազօթանիւթ և 46,58 ճարպային նիւթեր կը պարունակէ, Վիրճինիա Պընչ տեսակը՝ 29,52 ազօթանիւթ և 45,73 ճարպային նիւթեր, Սպանիական տեսակը՝ 31,20 ազօթանիւթ և 49,10 ճարպային նիւթեր, Վալանսիա տեսակը՝ 33,64 ազօթանիւթ և 49,60 ճարպային նիւթեր և Ափրիկեան տեսակը՝ 30,30 ազօթային նիւթ և 45,90 ճարպային նիւթեր։ Այս վերջին տարրալուծումները կատարուած են Մ. Նահանգներէն Հարաւային Քարօլայնայի Ֆլորանս քաղաքը հասած գետնապիստակներու նմոշներու վրայէն։ Այս տարրալուծումներու միջինը 30,85 ազօթանիւթի և 47,38 ճարպային նիւթի կը յանգի։ Ուրիշ նահանգներու արտադրութիւններուն տարրալուծումներուն միջինն ալ եղած է 25,85 ազօթանիւթ և 45,23 ճարպային նիւթ։ Ինչպէս կը տեսնուի, զանազան նահանգներու արտադրութիւններուն բովանդակութիւնը, հողին, կլիմային կամ տրուած խնամքին պատճառով, իրարմէ կը տարբերի։

Սնունդի մը արժէքը կախում ունի անոր կորով, ճարպ և կենդանական տաքութիւն արտադրելու կարողութենէն։ Կորովը կամ տաքութեան արժէքը կը չափուի սնունդին արտադրական արժէքովը։ Իոկ սնունդին անճարպ միս արտադրելու կարողութիւնը կը չափուի իր մարսելի ազօթանիւթովը։ Այս երկու ազդակներն ալ

չափ կարեւոր են, բայց առեւտրական սնունդի մը յարաբերական կարեւորութիւնը կախում ունի անասունին տեսակէն, կերակրումի նպատակէն և երկրին մէջ հասած առձեռն սնունդէն։

ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԻ ՅԱՐԱԿԻՑ

ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՏԻՊԵՐԸ

Մ. Նահանգներու մէջ գետնապիստակի խիւսակներուն և մայծերուն համար ընդունուած տիպերը հետեւեալներն են.

1. Ընտիր գետնապիստակի խիւսակ. — Ընտիր գետնապիստակի արտադրութիւն է, անոյշ հոտով, եփումի ժամանակ չեռած և առնուազն կը պարունակէ հարիւրին 44 ազօթանիւթ կամ հարիւրին 50՝ ազօթանիւթ և ճարպ միացած։

2. Առաջին գետնապիստակի խիւսակ. — Առաջին գետնապիստակի արտադրութիւն մըն է, անոյշ հոտով և առնուազն հարիւրին 34 ազօթանիւթի և ճարպի միացեալ բովանդակութեամբ։

3. Ընտիր գետնապիստակի մայծ. — Ընտիր գետնապիստակի խիւսակին ազագուծ արտադրութիւնն է, առնուազն հարիւրին 44 ազօթանիւթի կամ հարիւրին 50 ազօթանիւթի և ճարպի բաղադրեալ բովանդակութեամբ։

4. — Առաջին գետնապիստակի մայծ. — Առաջին գետնապիստակի խիւսակին ազագուծ արտադրութիւնն է, առնուազն հարիւրին 34 ազօթանիւթի կամ հարիւրին 40 ազօթանիւթի և ճարպի բաղադրեալ պարունակութեամբ։

ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԸ ԻՔՐԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՍՆՈՒՆԻ

Գետնապիստակները ազօթանիւթով և իւղով հարուստ ըլլալուն համար, իբրեւ մարդկային սնունդ, մեծ արժէք կը ներկայացնեն։ Մարդուն յատկացուած սնունդի մը արժէքը կը չափուի իր պարունակած մարսելի ազօթանիւթով և արտադրական արժէքով։ Հետեւեալ ցուցակը, գետնապիստակին, իբրեւ մարդկային սնունդ, ուրիշ սնունդներու հետ, յարաբերական արժէքը կը ցուցնէ։

	Ազօթանիւթ	Ճարպ	Յարաբերական արժէք
Գետնապիստակի միջուկ	29,0	47,0	62
Գետնապիստակի կարագ	25,0	48,0	61
Գետնապիստակի զուտ մայծ	52,0	12,0	38
Հաւկիթ	12,8	11,4	18
Եզան միսի զիտ	19,0	20,0	30
Եզան միջամիս	15,9	16,1	24

պիտտակի ծանօթ հիւանդութիւնը տերեւային կեղտն է (Cercospora perionata), որուն առաջը կ'առնուի բերքի փոխցանով և հողի ուրդումով:

Արեւմտեան Ափրիկէի և մասնաւորաբար Սենեկալի մէջ իր գլխաւոր թշնամին են փոքր termitesները: Աներեւակայելի վնաս կը հասցնեն գետնապիտտակին և, որոնց զէմ պայքարելու համար, զժրադժարար ազդու միջոց մը գտնուած չէ: Բերքին մինչև հաւրիւրին 40ը կը փճացնեն:

Գետնապիտտակի մուկն ալ (La punaise des arachides) փոքր չափով վնաս կը հասցնէ:



Պատկեր 25. — Եգիպտացորենի շարքերուն մէջ անող գետնապիտտակի տուկեր:

ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԻ ԿԱՐԱԳԻՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Գետնապիտտակի կարագին առեւտրական արտադրութիւնը վերջին տարիներու շատ յառաջացած է: Մ. Նահանգներու մէջ գործարան մը միայն, 1919ին, 6,000,000 ամերիկեան քաշ արտադրած է: Մ. Նահանգներու մէջ 12 հատ մեծ և 100 է աւելի փոքր գործարաններ կան:

Նախապէս գետնապիտտակի կարագը մեծ մասամբ իւր սնունդ

կը գործածուէր վատառողջ մարդոց համար, բայց հիմա նախընթերքներու մէջ գլխաւոր դեր կը կատարէ և մասնաւորաբար սանսուիչներու պատրաստութեան մէջ մեծաքանակ կը գործածուի:

ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԻ ԿԱՐԱԳԻՆ

ՍՆՆԴԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Գետնապիտտակի կարագը սննդական մեծ արժէք ունի և աւելի սննդատու է քան պիմքի: Գետնապիտտակի կարագին բազալըութիւնն է հետեւեալը: Հարիւրին 2,1 ջուր, 29,3 պրօթէին, 46,5 ճարպ, 17,1 քառապոլիսաքարներ և 5 մոխիր: Կիզանիւթային արժէքը, ամերիկեան քաշ գլուխ 2,825 քալորի է: Պիմքի բազալըութիւնն ալ հետեւեալն է: Հարիւրին 65,5 ջուր, 19,8 պրօթէին, 13,6 ճարպ և 1,1 մոխիր: Քառապոլիսաքար չկայ: Կիզանիւթային արժէքը ամերիկեան քաշ գլուխ 950 քալորի է:

Այս թիւերէն կը հասկցուի թէ՛ գետնապիտտակի կարագը, բազալըութիւնը պիմքին, մէկուկէս անգամ աւելի ազօթանիւթ, երեք անգամ աւելի ճարպ, մօտաւորապէս հինգ անգամ աւելի մոխիր և երեք անգամ աւելի կիզանիւթային արժէք կը պարունակէ: Ասոնցմէ զատ մինչ գետնապիտտակի կարագը հարիւրին 17,1 քառապոլիսաքարներ կը պարունակէ, պիմքի գուրկ է անոնցմէ:


Գետնապիտտակի կարագի պատրաստութեան համար միայն լաւագոյն նախանիւթեր գործածուելու են: Լաւագոյն կարագը ստուգելու պիտտակներով չի պատրաստուիր: Ասկէ զատ լաւագոյն պիտտակով լաւագոյն կարագ ստանալու միջոցը, այս ճարտարարուեստին հետ առնչութիւն ունեցող բոլոր գիտական և առողջապահական պայմաններուն անթերի գործադրութեան մէջ կը կայանայ:

ԳԵՏՆԱՊԻՍՏԱԿԻ ՄԹԵՐԻՔԻՆ ԽՆԱՄՔԸ

Գետնապիտտակի կարագի գործարաններէն մեծագոյն մասը, իրենց գետնապիտտակի մթերքը, գետնապիտտակ մաքրող և կեղեւող գործարաններէն կը հալթաթեն, ինչ որ ուղիղ միջոցն է: Մի քանի գործարաններ ալ կան որ իրենց մթերքը ուղղակի երկրագործներէն գնելով, յետոյ իրենք կը մաքրեն և կեղեւուն կը հանեն: Այս պարագային մաքրութիւնն ու կեղեւումը պէտք է կանխապէս առանձին շէնքի մը մէջ, որպէսզի փոշիները կարագին չի խառնուին:

Գետնապիտտակի կարագի պատրաստութեան մէջ էն աւելի գործածուած տեսակները Վիրճինիա Պընճ, Վիրճինիա Ռընըր և Սպանիական տեսակներն են: Կարգ մը գործարաններ միայն Վիր-

քարը (cake) իրրեւ անասունի կեր կը ծախեն անասնապահներուն :
(Պատկեր 27) :



Պատկեր 26. — Գեոնապիսակի կարագի աղիական գործարանի մը խորովումի եւ պաղեցումի կազմած :


ՉԵՌՆԱՀԱԻԱՔՈՒՄ

Գետնապիստակները փայլեցուելէ ետքը, կը գրուին սեղաններու վրայ, որոնց շուրջը կիններ շարուելով, չի ճերմկած կամ անգոյն պիտակները, ինչպէս նաեւ օտար նիւթերը կը զատեն ձեռքով : Ասկէ ետքը այս մաքրուած պիտակները կը զրկուին աղօրիքները :

ԽԱՌՆՈՒՐԴՈՒՄ

Երբ գետնապիտակի կարագի պատրաստութեան մէջ երկու տեսակ կամ աստիճան գետնապիտակ գործածուի, ասոնք պէտք է իրարու հետ լաւ մը խառնուին : Կարգ մը գործարաններ միայն մէկ տեսակ գետնապիտակ կը գործածեն : Ուրիշներ Վիրճինիական և Սպանիական տեսակներու խառնուրդ մը կը գործածեն : Գործարաններ կան, որոնք երեք մաս Սպանիական և մէկ մաս Վիրճինիական կը գործածեն : Ուրիշներ ալ այս երկու տեսակներուն զանազան համեմատութիւններ կը կիրարկեն :

Վիրճինիական գետնապիտակները երբ առանձին գործածուին, ստացուած գետնապիտակը, եթէ նոյն իսկ շատ բարակ ալ աղացուած ըլլայ, թոյլ կ'ըլլայ, բայց եթէ Սպանիական գետնապիտակով խառնուի, թանձրութիւնը ապահովուած կ'ըլլայ : Եթէ Սպանիական տեսակը առանձին գործածուի, կարագը շատ հարթ և թանձր կ'ըլլայ, բայց աւելի իւզային : Լաւագոյն կարագ մը արտադրելու համար, Սպանիական կամ ուրիշ իւզառատ տեսակ մը, նուազ իւզոտ տեսակի մը հետ պատշաճօրէն խառնելու է :



Պատկեր 27. — Գեոնապիսակի կարագի գործարանի ներկցումի մեքենայ : Այս մեքենաները պիտակներուն կարմիր մօրքերը կ'անջատեն :

ԱՂԱՅՈՒՄ

Գետնապիտակի կարագի առեւտրական պատրաստութիւնը, պիտակները աղալու մասնաւոր մեքենաներու գործածութեան կարօտ է : Կարագը պէտք է ունենայ հատաւոր ձեւ մը, քան խլտաւոր թանձրութիւն : Եթէ գետնապիտակը շատ բարակ աղացուի, ւոր թանձրութիւն : Եթէ գետնապիտակը շատ հալառակ, եթէ շատ հոտ աղացուի, աւագային շաշալուծ մը կուտայ, ինչ որ մեղադրելի է : Գետնապիտակի աղացումի նպատակը պէտք է ըլլայ իւզային բջիջ-

ները կոտորել քան փշրել զանոնք։ Աղացումի մաշած կամ հարթ մետաղեայ տախտակները երբ իրարու մօտ դառնան, լաւ արդիւնք չեն տար, իսկ անոնց միջեւ կարագին քսուած խիւսային արտադրութեան մը ծնունդ կուտայ, ինչ որ իւրին դուրս քամուելուն պատճառ կ'ըլլայ։ Մետաղեայ տախտակներուն իրարու շփուելէն մեծ տաքութիւն յառաջ կուգայ. ասոր մեծ ուշադրութիւն ընելու է, որպէսզի կարագը չի տաքնայ։ Կան տեսակ մը աղօրիքներ, որոնց աշխատող մասերը ջրաթաթաւ լաթերով չրջապատուած են։ Այս լաթերուն վրայ չրջան ընող ջուրի միջոցաւ տաքութիւնը կը հակադուրսի։

Սոշոր գետնապիտտակի կարագի գործարանները խոշոր աղօրիքներ ունին, 30 ձիու ուժով շարժիչներով (մօթէօր), որոնք իւրաքանչիւր վայրկեանը 30 ամերիկեան քաշ կ'աղան։ Փոքր գործարաններն ալ, պատկեր 29ին մէջ երեւցածին նման, փոքր աղօրիքներ ունին, որոնք չափաւոր կերպով դարձուելով, տաքնալու վտանգը կ'անջատուի։


Գետնապիտտակները աղացուելէ առաջ, իրենց կշիռին հարիւրին մէկ ու կէսէն երեք համեմատութեամբ խոհանոցի լաւ աղով կ'աղուին։ Աղին միօրինակ կերպով ցանուած ըլլալուն խիստ ուշադրութիւն ընելու է։ Կարգ մը գործարանատէրներ իրենց արտադրութիւնները, եղած պահանջին համեմատ, առանց աղի կամ քիչ աղով շուկայ կը հանեն։ (Պատկեր 28 եւ 29)։

ՇԻՇԵՐՈՒ ՄԷՋ ԳՆԵԼ ԵՒ ԾՐԱՐԵԼ

Գետնապիտտակի կարագը շուկայի մէջ կը ծախուի ապակեայ շիշերու, ապակեայ անօթներու, թիթեղէ ամաններու և տախտակներու մէջ։ Այս զանազան ամաններու մէջ, գետնապիտտակի կարագը լեցուելէ ետքը, լաւ մը խցուելու են։ Սցման համար ձգախէժէ օղակներ երբեք գործածելու չէ։ Որովհետեւ գետնապիտտակի կարագը ձգախէժը կը հալեցնէ։ Ամաններուն բերանը թուղթով ծածկել յարմարագոյնն է։ Ընտանեկան պէտքերու համար գետնապիտտակի կարագի փոքր ամանները լաւագոյնն են։ Շուտով սպառել և նորը առնել ամէն կերպով յարմար է։ Գետնապիտտակի կարագ պարունակող շիշերը կամ ապակեայ ամանները, մէկ, երկու կամ երեք երկոտասանեակ, փայտէ տուփերու մէջ կը ծրարուին։ Ապակեայ ամանները փայլուն և ձերմակ ըլլալու են. մօխրագոյն ամանները գետնապիտտակի լաւագոյն կարագին ստորին տեսակի երեւոյթ մը կուտան։ Գետնապիտտակի կարագին գործածութեան ընթացքին, փայտէ շիշերով մը միշտ խառնելու է։ Ապակեայ ամաններն ալ նմանապէս դգալով մը կամ գոնակով մը լաւ մը խառնելու է։ Այս կերպով գէպ ի վեր հաւաքուող իւրը կարագի գոնակուածին մէջ խառնուած կ'ըլլայ։

ԳԵՏՆԱՊԻՏՏԱԿԻ ԿԱՐԱԳԻՆ ԱՌՏՆԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Գետնապիտտակի կարագին առեւտրական պատրաստութեան մասին զրուածներէն հասկցուեցաւ թէ՛ մէթօրը շատ պարզ է։ Սոփորաբար գետնապիտտակէն՝ իր սերմերէն և կարմիր մաշկերէն զտ, բան մը զատուած չէ և անոր վրայ, փոքրաքանակ աղէ զտ, բան մը աւելցած չէ։ Շատեր կը կարծեն թէ՛ գետնապիտտակի կարագը աղացուած գետնապիտտակի վրայ իւր աւելցնելով կը ստացուի։ Կճեպուած գետնապիտտակները, տեսակին համեմատ, հարիւրին 13—14 իւր պարունակելուն, անոնց վրայ իւր աւելցնել աւելորդ է։ Միակ տարբերութիւնը՝ աղացուած գետնապիտտակին և գետնապիտտակի կարագի միջեւ, մասնիկներուն բարակութիւնն է։




Պատկեր 28. — Գետնապիտտակի կարագի գործարանի մը աղացումի և Եիշերը լեցնելու յատուկ մեխանիզմներ։

Աժանագին գետնապիտտակի կարագ, պարզ միւս ջարդող մեքենայով մը, կարելի է պատրաստել տունին մէջ։ Չի կճեպուած հում կճեպուած հում գետնապիտտակ գնուելով տունին փուռին մէջ կը խորովուի և կամ արդէն խորոված գետնապիտտակ կը գնուի։ Գետնապիտտակները փուռին մէջ խորովուած ատեն, ուշադրութիւն ընելու է որ չալրին։ Գետնապիտտակները ժամանակ ժամանակ խառնելու և շարժելու է, որպէսզի խորովումը միօրինակ ըլլայ։

Չկանգնած պիտակներէն աւելի կ'ենթադրուած պիտակներուն խորովումին մեծ ուշադրութիւն ընելու է, վասնոր այս վերջինները դիւրաւ կը խանձին: Խորովումի ժամանակ, ատեն ատեն պիտակները քննելով, փափաքուած աստիճանը կրնայ ձեռք ձգուիլ:

Երբ չկանգնած պիտակներ գործածուին, անոնք իրենց կ'ենթադրուած միասին խորովելու և յետոյ պաղեցնելու է: Պաղելէ ետքը, անոնց կ'ենթադրուած հանելու և ճերմկցնելու է: Գետնապիտակները ճերմկցնելու համար, զանոնք թելէ մաղի վրայ աճուելու է: Աճ-



Պատկեր 29. — Փոքր գործարաններու գետնապիտակի կարագի փոքր աղբիք մը:

ռումի միջոցաւ կարմիր մաշկերը կը զատուին և սերմերը կը թուլնան: Եթէ մաղը յարմար ծակեր ունենայ, զատուած սերմերը կրնան դուրս մաղուիլ: Գետնապիտակի միսերը, բաց օդին մէջ մէկ ամանէ միւս աման փոխադրելով դիւրաւ կը մաքրուին. որովհետեւ ծակը, այս կերպով մաշկերը և մաշկի փշուրները դուրս կը թռնեն: Գետնապիտակները այս կերպով մաքրուելէ ետքը, աղաւու է զանոնք: Աղը աղալէն առաջ կամ ետքը կրնայ աւելցուիլ: Միսի լաւ մեքենայով մը, գետնապիտակի նուշերը գոհացուցիչ կերպով կարելի է աղալ, պայմանաւ որ մեքենային ակաւները մաշած չըլլան: Մեքենային ակաւները շատ սուր ըլլալու են, որպէսզի կարելի եղածին չափ բարակ աղուի: Ի հարկին, երկրորդ անգամ մը եւս աղալու է: Աղալէ առաջ եթէ աղը աւելցուած չէ, երկրորդ

անգամ աղալէ առաջ, աղը աւելցնելու է: Լաւատեսակ կարագ մը ունենալու համար, լաւագոյն է յաճախ պատրաստել, քան թէ՝ մի քանի ամսուան պէտքը մէկէն պատրաստել: Տունէն պատրաստուած գետնապիտակի կարագը, շուկայէն գնուածէն շատ աւելի ամանի կը նստի:

ԳԵՏՆԱՊԻՏԱԿԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՀԱՆՈՅԸ

Գետնապիտակի կարագով պատրաստուած կերակուրներով հարուստ է ամերիկեան խոհանոցը: Ահա անոնցմէ գլխաւորները.

Կարնալսառն գետնապիտակի կարագով սանճուիչ. — Գետնապիտակի կարագին լաւագոյն գործածութիւնը թերեւս անով սանճուիչ լեցնելն է: Այս նպատակին համար, սմանք ուղղակի գետնապիտակի կարագը կը գործածեն, իսկ ուրիշներ ալ նախամեծար կը համարին զայն թանձրացնել քիչ մը սերով կամ ուրիշ հեղուկով մը: Ահաւորի այդ սանճուիչին բովանդակութիւնը.

Մէկ գաւաթ կաթ

Մէկ սեղանի դգալ ալիւր

Մէկ սեղանի դգալ ջուր

Մէկ հաւկիթ

Մէկ գաւաթ գետնապիտակի կարագ

Մէկ թէյի դգալ աղ

Կէս սեղանի դգալ փէփրիքա (paprika)

Երկու սեղանի դգալ քացախ

Կէս գաւաթ մանրուած անկուտ ձիթապտուղ:

Կաթը տաքցուր կրկնակ կաթսայի մը մէջ: Միւս կողմէ ալիւրը, ջուրը և գետնապիտակի կարագը լաւ մը խառնէ, վրան աւելցուր աղն և փէփրիքան և թեթեւ կերպով զարնուած հաւկիթը: Յետոյ տաք կաթը խառնէ վրան և կրկնակ կաթսայի մը մէջ 5 վայրկեան եփէ: Յետոյ ասոնց վրայ աւելցուր մանրուած ձիթապտուղը և քացախը: Պաղելէ ետքը լեցուր սանճուիչները: Այս սանճուիչը երկար չի դիմանալուն համար, պէտքին չափ պատրաստէ:

Գետնապիտակի կարագով չամիչի սանճուիչ. — Հաստ հացի շերտի մը վրայ գետնապիտակի կարագ քսէ և վրան շարք մը թնառ չամիչ շարէ:

Գետնապիտակի կարագով աղցանի քերպիյէ:

Կէս գաւաթ թթու սեր:

Երկու սեղանի դգալ գետնապիտակի կարագ

Երկու սեղանի դգալ քացախ

Մէկ հաւկիթ

Կէս սեղանի դգալ շաքար

Կէս թէյի դգալ աղ

Քառորդ թէյի դգալ մանանեխ

Մէկ ութերորդ դգալ փէփրիքա (կարմիր պղպեղ) :

Այս բոլորը իրարու խառնելով, եփէ կրկնակ կաթնայի մը մէջ, մինչեւ որ թանձրանան :

Գեսնապիսակի կարագով հացաւեհեր. — Հացերը կըր կտրէ և կարմրցուր զանոնք կրակին վրայ : Գետնապիստակի կարագը թարմ պանիրով խառնելէ և վրան աղ աւելցնելէ ետքը, կարմրած հացաւեհերուն վրայ թեթեւօրէն քսէ :

Գեսնապիսակի եւ լոլիկի ապուր. —

Մէկուկէս գաւաթ լոլիկի ջուր

Կէս գաւաթ գետնապիստակի կարագ

Մէկ թէյի դգալ աղ

Քառորդ թէյի դգալ կարմիր պղպեղ

Երկուքուկէս գաւաթ եռացած ջուր :

Ատախճանաբար լոլիկը աւելցուր գետնապիստակի կարագին վրայ և երբ թանձրանայ, վրան աւելցուր համեմներն և ջուրը : Տաք վայրկեանի չափ խառնէ և յետոյ կարմրած հաց ջարդէ մէջը :

Բրինձի ջուրով եւ գեսնապիսակի կարագով ապուր. — Երբոր բրինձը շատ ջուրով խաշուի, աւելորդ բրինձի ջուրը ապուր մը պատրաստելու կը ծառայէ : 140 տրամ բրինձի ջուրին վրայ աւելցուր երկու սեղանի դգալ գետնապիստակի կարագ, կէս թէյի դգալ սոխի ջուր կամ ջարդուած աղատքեղ և աղ : Ասոնք լաւ մը իրարու խառնէ և յետոյ տաք տաք խմէ :

ՄԻՍԻՆ ՏԵՂԸ ԲՈՆՈՂ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

Գետնապիստակի կարագը, միսին նման պրօտէին և ճարպ պարունակելուն համար, միսին տեղը լաւ կը բռնէ :

Բրինձ գեսնապիսակի կարագի քաջանով (sauce) .

2 գաւաթ կաթ

2 սեղանի դգալ ալիւր

6 սեղանի դգալ գետնապիստակի կարագ

2 թէյի դգալ աղ

2 թէյի դգալ սոխի ջուր :

2 ու կէս գաւաթ եփած բրինձ :

Ալիւրը և գետնապիստակի կարագը քիչ մը պաղ կաթով ցոլուէ : Տաք կաթը վրան աւելցուր համեմներու հետ միասին : Մինչեւ որ թանձրանայ եփէ : Յետոյ եփումի ամանի մը մէջ խաւ մը բրինձ գիր և վրան ալ խաւ մը գետնապիստակի թացան : Մինչեւ որ

ամանը լինայ այս կերպով խաւերը վրայէ վրայ չարէ : Յետոյ 20 վայրկեան փուռի մը մէջ եփէ :

Գեսնապիսակի կարագի նկանակ. —

2 գաւաթ հացի փշրանք

1 գաւաթ եփած բրինձ

Կէս գաւաթ ջարդուած ձիթապտուղ

Քառորդ թէյի դգալ կարոս

Կէս գաւաթ գետնապիստակի կարագ

1 թէյի դգալ սոխի ջուր

2 թէյի դգալ աղ

2 հաւկիթ

Կէս գաւաթ կաթ :

Այս վերի նիւթերը իրարու հետ խառնէ, մինչեւ որ նկանակի ձեւ առնեն : Յետոյ եփէ, մինչեւ որ թուրս գոյն մը առնէ : Լոլիկի թացանով կեր :

Գեսնապիսակի կարագի ձուագեղ. —

4 հաւկիթ

4 սեղանի դգալ կաթ

6 սեղանի դգալ գետնապիստակի կարագ

1 թէյի դգալ աղ :

Գետնապիստակի կարագը կաթով խառնէ : Հաւկիթներու ճերմկուցները և դեղնուցները զատելով, լաւ մը զարկ : Կաթը զարմուռուցները և դեղնուցները զատելով, իրար խառնէ և զարմուռու ճերմկուցներուն մէջ փաթթէ : Յետոյ եփէ : Խոշոր տաք պնակի մը մէջ գիր և լոլիկի թացանով կեր :

Գեսնապիսակի կարագի քափձու (Fondue) . —

3 հաւկիթ

6 սեղանի դգալ գետնապիստակի կարագ

Երեք քառորդ գաւաթ կաթ

1 թէյի դգալ աղ

1 գաւաթ չոր հացի փշրանք :

Գետնապիստակի կարագը կաթով խառնէ և վրան աւելցուր հաւկիթի զարմուռուցները և հացի փշրանքները : Յետոյ սոխիկ պատէ թանձրօրէն զարմուռու ճերմկուցներու մէջ : Թափէ եփումի ամանի մը մէջ կամ եփումի մասնաւոր գաւաթներու մէջ՝ տաք ջրով շրջապատուած և եփէ մինչեւ որ կարծրանայ :

Գեսնապիսակի կարագի հաց եւ կերակրեղենք. —

Գետնապիստակի կարագը զանազան տաք հացերու կամ կերակրեղեններու մէջ ալ լաւ է : Այս նպատակով գործածուած ժամանակ, րեղեններու մէջ չափ չափ ճարպ զրուելու է կամ բնաւ զրուելու չէ : Պիտքուններու պատրաստութեան մէջ, ուրիշ ճարպի տեղ, գետնապիստակի կարագը կրնայ գործածուիլ :

կարծր շաքարեղէններ (hard candy): Գործաւորներու մեծամասնութիւնը հայ է, իսկ աղջիկ գործաւորները, բացի Յէն, ամերիկեան հիններ են: Բ. — 197 State street-ի գործարանը: Այս գործարանը Շաղալեան ընկերութեան մէկ ճիւղն է: Հոս ամէն օր կը խարկեն 30,000 ամերիկեան քաշ ամերիկեան գետնապիտտակ, կաղին, նուշ, ընկոյզ, ամերիկեան ընկոյզ (pecans), Պրազիլեան ընկոյզ և ընկոյզի բազմաթիւ տեսակներ, որոնք ամերիկեան բարեկեցիկ շրջանակներու սեղաններուն վարդը կը կազմեն և առատարակ պերճ կեանքի սննդեղէն կը նկատուին: Այս գործարանը, ամբողջ Ամերիկայի համանման գործարաններուն մէջ աչքի կը զարնէ իբրեւ փայլուն տիպար գործարան մը:

Շաղալեան Ընկերութիւնը կը ղեկավարուի անօրէններու խորհուրդէ մը (Board of Directors), որուն կ'անդամակցին National Shawmut Bank-ի փոխ նախագահ Mr. R. H. Ryder և ուրիշներ: Պ. Հինգլեան անգամ ըլլալով անօրէններու խորհուրդին, կը հսկէ երկու գործարաններուն վրայ:

Շաղալեան տունը իր արտադրութիւնները գլխաւորաբար շուկայ կը հանէ Նիւ Ինկլէնտի, Փենսիլվանիոյ և Նիւ Եօրքի նահանգներուն մէջ:

Ամերիկեան գետնապիտտակը և ամերիկեան ընկոյզը մեծ մասով կը ստացուին Ճիօրճիա, Քարօլայնա և Վիրճինիա նահանգներէն:

Շաղալեան կարեւոր գործարանէն գտն, որ կը պարունակէ զըլխաւորաբար ամերիկեան գետնապիտտակի շաքարեղէններ, Ամերիկայի մէջ կան ուրիշ քաղցրեղէնի հայ գործարաններ ալ, որոնց արտադրութիւններուն մէջ ալ մասամբ կը մտնայ ամերիկեան գետնապիտտակ: Ասոնք են Պ. Պ. Մկրտիչ Կիւզլեանի և Կիրակոս Պօղոսեանի Պոթմոնի շաքարեղէնի գործարանը, որուն հիմնադիրն է Պարբերգցի Պ. Թոմ Սիմոնեան՝ Շաղալեանի նախկին ընկերներէն. նմանապէս Պարբերգցի Պ. Նազարէթ Սարգիսեանի Պոթմոնի գործարանը և Մասաչուսէցի նահանգին Ճէմէյլիքա Փլէյնի Պ. Պ. Աւետիս Վարդերեսեանի և Արմենակ Զիճեանի՝ առաջինը Եօզկաթի Զախմախ գիւղէն և երկրորդը Պոլսեցի գործարանը, ևլն. ևլն.:

Փափաքելի է որ ամերիկահայ շաքարեղէնի գործարաններու և առեւտրականներու ու խանութպաններու միջև, զարուս յաջողութեան ամենամեծ և արգիական ազգակը եղող գործակցական ոգին մուտք գործէր և փոխադարձ շահերու և իրերաօգնութեան կապերով կազմուէին գործակցական ընկերութիւններ: Որովհետեւ, ինչպէս ըսուած է, մէկ ձեռքը գործ կը տեսնէ, բայց ծափ չի զարնէր:

Գեհնապիտտակի եւ իւ կարագին միջազգային առեւտրը

Գետնապիտտակի տիեզերական արտադրութեան գլխաւոր կեդրոններն են Միացեալ Նահանգներ, Չինաստան, Ճափոն, Հնդկաստան, Սենեկալ, Նիկէրիա, Կապիա, Սուտան, Պրազիլիա, Մոզամպիք, Ալճէրիա, Եգիպտոս, Սպանիա, Ճափա ևլն ևլն:

Միացեալ Նահանգներուն երկրագործական Տարեգիրքին վիճակագրական Պաշտօնատան 1924 երկրագործական Տարեգիրքին վիճակագրական բաժինը քննելով կը տեսնենք թէ՛ աշխարհիս բոլոր երկիրներու միջեւ 1923ին եղած գետնապիտտակի միջազգային առեւտրը՝ երկու միլիոն ամերիկեան քաշէ աւելի արտածուածով կը ներկայանայ:

Դարձեալ նոյն տարւոյ գետնապիտտակի կարագի միջազգային առեւտրը կը ներկայանայ 84 միլիոնէ աւելի ամերիկեան քաշի ներածուածով և մօտ 200 միլիոն ամերիկեան քաշի արտածուածով:

Այս հակիրճ տալերը որոշապէս կը ցուցնեն թէ՛ գետնապիտտակը որպէս հողային արտադրութիւն, արդիւնաբերական մեծ արժէք մը կը ներկայացնէ և իբրեւ ճարտարարուեստական նիւթ տնտեսական մեծ կարեւորութիւն ունի և կոչուած է երկրի մը ազգային տնտեսութեան մէջ կատարել որոշ դեր մը:



Գեհնապիտտակի արտ. մը

կարծր չաքարեղեններ (hard candy) : Գործարարներու մեծամասնութիւնը հայ է , իսկ ազնիւ գործարարները , բաց ի 3էն , ամերիկացիներ են : Բ. — 197 State street-ի գործարանը : Այս գործարանը Շաղալեան ընկերութեան մէկ ճիւղն է : Հոս ամէն օր կը խաբիկեն 30,000 ամերիկեան քաշ ամերիկեան գետնապիտտակ , կաղին , նուշ , ընկոյզ , ամերիկեան ընկոյզ (pecans) , Պրազիլեան ընկոյզ և ընկոյզի բազմաթիւ տեսակներ , որոնք ամերիկեան բարեկեցիկ շրջանակներու սեղաններուն վարդը կը կազմեն և առհասարակ պերճ կեանքի սննդեղէն կը նկատուին : Այս գործարանը , ամբողջ Ամերիկայի համանման գործարաններուն մէջ աչքի կը զարնէ իրբեւ փայլուն տիպար գործարան մը :

Շաղալեան Ընկերութիւնը կը ղեկավարուի տնօրէններու խորհուրդէ մը (Board of Directors) , որուն կ'անդամակցին National Shawmut Bank-ի փոխ նախագահ Mr. R. H. Ryder և ուրիշներ : Պ. Հինգլեան անգամ ըլլալով տնօրէններու խորհուրդին , կը հսկէ երկու գործարաններուն վրայ :

Շաղալեան տունը իր արտադրութիւնները գլխաւորաբար շուկայ կը հանէ Նիւ Ինկլէնտի , Փենսիլվանիոյ և Նիւ Եորքի նահանգներուն մէջ :

Ամերիկեան գետնապիտտակը և ամերիկեան ընկոյզը մեծ մասով կը ստացուին Ճիօրճիա , Բարօլայնա և Վիրճինիա նահանգներէն :

Շաղալեան կարեւոր գործարանէն զատ , որ կը պարունակէ գըլխաւորաբար ամերիկեան գետնապիտտակի չաքարեղեններ , Ամերիկայի մէջ կան ուրիշ քաղցրեղէնի հայ գործարաններ ալ , որոնց արտադրութիւններուն մէջ ալ մասամբ կը մտնայ ամերիկեան գետնապիտտակ : Ասոնք են Պ. Պ. Մկրտիչ Կիւզելեանի և Կիրակոս Պօղոսեանի Պոթմոնի չաքարեղէնի գործարանը , որուն հիմնադիրն է Խարբերդցի Պ. Թոմ Սիմոնեան : Շաղալեանի նախկին ընկերներէն . նմանապէս Խարբերդցի Պ. Նաղարէթ Սարգիսեանի Պոթմոնի գործարանը և Մասաչուսէցի նահանգին Ճէմէյիքա Փլէյնի Պ. Պ. Աւետիս Վարդերեսեանի և Արմենակ Զիլճեանի՝ առաջինը Եօզկաթի Զախմախ գիւղէն և երկրորդը Պոլսեցի գործարանը , և ըն . և ըն . :

Փափաքելի է որ ամերիկահայ չաքարեղէնի գործարաններու և առեւտրականներու ու խանութպաններու միջև , զարուս յաջողութեան ամենամեծ և արդիական ազդակը եղող գործակցական ոգին մուտք գործէր և փոխադարձ շահերու և իրերասօգնութեան կապերով կազմուէին գործակցական ընկերութիւններ : Որովհետև , ինչպէս ըսուած է , մէկ ձեռքը գործ կը տեսնէ , բայց ծափ չի զարնէր :

ԳԵՏՆԱՊԻՏԱԿԻ ԵՒ ԻՐ ԿԱՐԱՉԻՆ ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ԱՌԵՏՈՒՐԸ

Գետնապիտտակի տիեզերական արտադրութեան գլխաւոր կեդրոններն են Միացեալ Նահանգներ , Չինաստան , Ճափոն , Հնդկաստան , Սինեկալ , Նիկէրիա , Կամպիա , Սուտան , Պրազիլիա , Մոզամպիք , Ալճէրիա , Եգիպտոս , Սպանիա , Ճափա և ըն . և ըն . :

Միացեալ Նահանգներուն երկրագործական Վաշինկթօնի Կեդրոնական Պաշտօնատան 1924 երկրագործական Տարեգիրքին վիճակագրական բաժինը քննելով կը տեսնենք թէ՝ աշխարհի բոլոր երկրներու միջեւ 1923ին եղած գետնապիտտակի միջազգային առեւտուրը՝ երկու միլիառ ամերիկեան քաշէ աւելի արտածուածով կը ներկայանայ :

Գարձեալ նոյն տարւոյ գետնապիտտակի կարագի միջազգային առեւտուրը կը ներկայանայ 84 միլիոնէ աւելի ամերիկեան քաշի ներածուածով և մօտ 200 միլիոն ամերիկեան քաշի արտածուածով :

Այս հսկիրճ տողերը որոշապէս կը ցուցնեն թէ՝ գետնապիտտակը որպէս հողային արտադրութիւն , արդիւնաբերական մեծ արժէք մը կը ներկայացնէ և իրբեւ ճարտարարուեստական նիւթ տնտեսական մեծ կարեւորութիւն ունի և կոչուած է երկրի մը ազգային տնտեսութեան մէջ կատարել որոշ գեր մը :



ԳԵՏՆԱՊԻՏԱԿԻ ԱՐՏ ՄԻՋ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ	Էջ
Նախաբան 5	Գեոնապիսակի խոս . . . 41
Պատմական նօթեր 6	Խոսին բաղադրութիւնը եւ
Գեոնապիսակի անման համար	աննդական արժեքը . . . 42
անհրաժեշտ պայմաններ . . 9	Խիւսակ եւ մայծ 43
Հոլին ընտրութիւնն ու պատ-	Գեոնապիսակի նուեւրուն
րասութիւնը 10	բաղադրութիւնը 44
Պարարները 11	Գեոնապիսակի յարակից ար-
Կիրին կարեւորութիւնը . . 12	տարութիւններուն տիպերը . 45
Փայտի մոխիրները 12	Գեոնապիսակը իբրեւ մարդ-
Գեոնապիսակը՝ իբրեւ ազգի	կային սնունդ 45
հաւաքիչ 12	Գեոնապիսակի կարագ . . 46
Հնացու գեոնապիսակներուն	Գեոնապիսակի իւղ 46
արտադրութիւնն ու ընտր-	Հանգային տարրեր 46
ութիւնը 14	Գեոնապիսակը իբրեւ սնունդ
Յանգի համար հունցին պատ-	խոգերու 47
րասութիւնը 14	Իր միջառններն ու հիւանդու-
Լծվարի մը համար պէտքու	րիւնները 47
հնացուն 16	Գեոնապիսակի կարագին
Յանգի ժամանակը 16	պատրաստութիւնը եւ գործա-
Յանգի համար հոլին պատրաս-	ծութիւնը 48
տութիւնը 17	Գեոնապիսակի կարագին
Տունկերուն հեռաւորութիւնը	աննդական արժեքը . . . 49
Հունցեր ծածկելու խորութիւն	Գեոնապիսակի մթերքին
Մարեղում 18	խնամքը 49
Ոռոգում 20	Գործարանը եւ իր կազմածները
Գեոնապիսակի տեսակները . 21	Խորովում 50
Քաղումը 24	Ճերմկացում 51
Քաղահանի մեքոնները . . . 25	Ձեռնահաւաքում 52
Պեղումեն ետք ցօղուններուն	Խառնուրդում 52
չորացումը 25	Աղացում 53
Իրզումը 26	Շիւթում մեջ դնել եւ ծրարել
Ժողովել եւ մաքրել 30	Գեոնապիսակի կարագին
Գեոնապիսակներու աստի-	տոսնին պատրաստութիւնը
հանները 33	Գեոնապիսակի ամերիկեան
Կեթով առուծախ 35	խոհանոցը 57
Գեոնապիսակի տուկաներ . 36	Միսին տեղը բուռն կերակու-
Գեոնապիսակներուն արժեքը	ներ 58
Գեոնապիսակի հատոյթը եւ	Գեոնապիսակի քաղցրեղենի
գինը 37	Հայ գործարաններ Ամերի-
Գեոնապիսակը եւ իր յարակից	կայի մեջ 61
արտադրութիւնները՝ իբր կեր	Գեոնապիսակի եւ իր կարա-
անասուններու	գին միջազգային առեւտուրը



Գեղեցիկ Մայիսի՝ 28-ի գեղեցկագոյն օրը, երբ տակաւին «Վարդեմաւն արշալոյս» վարդաբոյր թեթեւ շղարշով մը ծածկած էր Արարատեան դաշտի լուրթ երկնակամարը, գոյգ Մասիսներու կողերէն հսկայ արծիւներ՝ թռչուններ թափ տալով՝ նման իշմիածնի վանքին կոչնակներու գիւ ձայներուն՝ թառեցան Խորմեանի դամբարանին վրայ և իբրեւ շղթայաղերձ Հրեշտակ-Արամազդներ՝ վեր առին անոր կախարչը:

— Եւ Խորմեան յարեաւ ի մե՛նելոց:

Խորմեանի ձիւնասպիտակ ոգին պարուրուած Հայկական եռագոյնին մէջ կը սաւառներ միջոցին մէջ: Դէպի դաշտ վազող հայ գիւղացիներ այս հրաշագոյն տեսարանէն սարսափահար՝ երեսնին կը խաշակնքէին հեկեկալով:

— Օրհնեա՛լ է Աստուած:

Խորմեանի լուսափրփուր ծոցէն կը թափէին «Խորմեան Գիւղատեսակեան Մատենաշար» ի առաջին գրքոյկի օրհնակները՝ «Գեոնապիստակի Մշակութիւնը»:

Հայ Գիւղատեսակեան խօսքը հազիւ արտասանուած՝ արդէն վերածուած էր գործի, բիւրեղանայով ակնթարթի մը մէջ:

— Եւ բա՛նն եղաւ մարմին:

«Գեոնապիստակի մշակութիւն» գրքոյկը ձրի է գիւղացիներուն համար: Այն քաղաքացիները, որ կը փափաքին ունենալ զանիկա, պարտաւոր են անգամագրուիլ Հայ Գիւղատեսակեանին:

«Մատենաշար»ին երկրորդ գրքոյկը՝ «Լուրիայի մշակութիւն» յանձնուած է մ

ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒ
ՀԱՅ ԳԻՒԴԱՏՆԵՐ



2013

Ես կլոր քար մըն եմ, ուրեղ
 երկու հայ շինական կայ, հոն կը
 զլորիմ կ'երթամ :

ԽՐԻՄԵԱՆ



Երբ Անաստուի մեջ գիւղ մը
 քանդուի, Պոլսոյ մեջ Սուլթանին
 զանը կը սարսի :

ԽՐԻՄԵԱՆ